Ազգ
Azg
armenian daily
25 ՓԵՏՐՈՒԱՐ 2003 ԵՐԵՔՇԱԲԹԻ 35 (2720)

Չեխիայում դատում են հայերի ապօրինի փոխադրմամբ զբաղվող խմբի

ՊՐԱՀԱ 24 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: Փետրվարի 24-ին Չեխիայի Հրադեց Կրալովա քաղաքում սկսվեց մի դատավարություն, որտեղ 14 մեղադրյալներից երեքը հայեր են՝ Հայաստանի քաղաքացիներ: Նրանք բոլորը մեղադրվում են Չեխիայից Գերմանիա եւ Ավստրիա անօրինական եղանակով մարդկանց տեղափոխելու մեջ: Ըստ մեղադրանքների, նշված անձինք սահմանը անօրինական կերպով անց են կացրել 500 մարդու: Մի շարք կասկածյալների մոտ հայտնաբերվել է հաշիշ ու մարիխուանա: Հանցավոր խմբի գլխավոր 24-ամյա ղեկավարը ուղիղ կապեր է ունեցել երեք հայերի հետ: Խումբը իր գործունեության սկզբում մասնագիտացել է հայերի, նախկին խորհրդային հանրապետությունների քաղաքացիների, ապա նաեւ՝ չինացիների անօրինական տեղափոխումներում: 2001թ. սեպտեմբերից ի վեր խումբը վաստակել է չեխական 2 մլն կրոն՝ մոտ 70 հազար դոլար: Նրանց սպասվում է ազատազրկում մինչեւ 3 տարի ժամկետով:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության հայտարարությունը

2003 թվականի փետրվարի 19-ին տեղի ունեցան Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրություններ: Արդյունքում ՀՌԱԿ-ի պաշտպանած թեկնածու Ռոբերտ Քոչարյանն ստացավ ընտրողների ձայների առավելագույն արդյունքը, իսկ մյուս ձայները բաշխվեցին ՀՀ նախագահի այլ թեկնածուների միջեւ:

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը ողջունում է.

– ՀՀ նախագահի փետրվարի 19-ի ընտրություններին քվեարկողների բարձր ակտիվությունը: Միաժամանակ հայտնում ենք մտահոգություն առանձին տեղամասերում իրականացված խախտումների վերաբերյալ, որոնք կատարել են թեկնածուների շահերը պաշտպանող մարդիկ:

– Այնուամենայնիվ, ընտրությունները հիմնականում անցել են օրենքի պահանջներին համապատասխան, ժողովրդավարության եւ թափանցիկության մթնոլորտում եւ փետրվարի 19-ի ընտրություններն ակնհայտորեն ավելի ժողովրդավարական էին, քան 1996 եւ 1998 թվականների նախագահական ընտրությունները:

ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը՝

– Անընդունելի է գտնում ընտրությունների արդյունքներից դժգոհ քաղաքական շրջանակների փորձերը՝ ապակայունացնելու ներքաղաքական իրավիճակը երկրում, նախագահական ընտրությունների երկրորդ փուլի նախօրեին,

– Ակնհայտ է, որ ծայրահեղական ընդդիմադիր պահվածք որդեգրած որոշ մարդկանց կեցվածքը եւ գործողությունները ձեռնտու են ռեւանշիստական շրջանակներին եւ կարող են վնասել թե՛ Հայաստանի միջազգային հեղինակությանը, թե՛ Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծմանը:

– Շնորհակալություն է հայտնում Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության բոլոր անդամներին՝ ՀՀ նախագահական ընտրությունների առաջին փուլում դրական աշխատանքի համար:

– Դիմում է ընդդիմությանը՝ առաջնորդվել ժողովրդավարության նորմերով, քաղաքակիրթ եղանակներով եւ գնալ երկխոսության, բանավեճերի եւ ծրագրային համեմատության եղանակով՝ ընտրողներին առիթ տալով կողմնորոշվելու:

ՀՌԱԿ Հանրապետական վարչությունն անհրաժեշտ է գտնում.

– Կուսակցության շրջանակներին եւ ակումբներին, ինչպես նաեւ բոլոր անդամներին եւ համակիրներին՝ ծավալել անհրաժեշտ քարոզչական եւ կազմակերպական աշխատանք՝ հօգուտ նախագահության թեկնածու Ռոբերտ Քոչարյանի, նպատակ հետապնդելով ընտրությունների երկրորդ փուլում արձանագրելու բարձր ցուցանիշներ եւ ՀՌԱԿ-ի պաշտպանած թեկնածուի լիակատար եւ վերջնական հաղթանակ:

ԱՍՈՒԼԻՍ

Գեղամյանը երկրորդ փուլում չի պաշտպանում ոչ մեկին

Քանի որ չի հավատում առաջին փուլի արդյունքներին

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Ազգային միաբանություն» հասարակական-քաղաքական կազմակերպության նախագահ, հանրապետության նախագահի թեկնածու Արտաշես Գեղամյանը երեկ իր գրասենյակում հրավիրել էր ասուլիս: Դա մեծ հետաքրքրություն էր ստեղծել լրագրողների շրջանակում, քանի որ, ուզենք կամ ոչ, ընտրություններում 3-րդ տեղը գրաված այս թեկնածուի դիրքորոշումից շատ բան է կախված՝ կմիանա՞ նա մյուս ընդդիմադիրներին, թե՞ կորդեգրի մեկ այլ քաղաքականություն: Ոչ փոքր սենյակում գրեթե կանգնելու տեղ չկար: Եվ չնայած դրան, Արտաշես Գեղամյանն իր նախընտրական շտաբի հայտարարության հրապարակումից հետո մեկ-երկու նախադասություն ասաց եւ անտեսելով իրեն ուղղված հարցերը՝ հեռացավ:

PHOTOLURE

Գեղամյանի կենտրոնական նախընտրական շտաբի հայտարարությունը ներկայացրեց Ալեքսան Կարապետյանը:

Համաձայն հայտարարության, նախագահական ընտրություններում «զանգվածային կեղծիքների միջոցով երկրորդ փուլից դուրս դրեցին վերջին 12 տարիների ընթացքում իրականացված թալանի ռեալ այլընտրանքը երաշխավորող հայրենասիրական ուժերի առաջնորդին Արտաշես Գեղամյանին...»:

Հասկանալի է, որ համեստությունը ոչ միայն Գեղամյանի, այլեւ վերջինիս նախընտրական շտաբի համար բնավ էլ բնորոշ գիծ չէ, բայց եւ պետք է հասկանալ, որ սահմաններ ճանաչելու հասկություն պետք է ունենա յուրաքանչյուրը:

Ինչեւէ, շտաբի հայտարարության մեջ, բացի Գեղամյանի եւ նրա հակճգնաժամային ծրագրի գովերգումից, պահանջ է ներկայացվում «չեղյալ հայտարարել նախագահական ընտրությունների արդյունքները եւ անցկացնել ազատ, արդար, օրինական ընտրություններ:

Տես ➧ էջ 2

Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը եւ Ղազախստանը մտադիր են ստեղծել միացյալ տնտեսական տարածք

ՄՈՍԿՎԱ, 24 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսի եւ Ղազախստանի նախագահների փետրվարի 23-ին ստորագրած հռչակագրում ասված է, թե իրենք պայմանավորվել են մինչեւ 2003 թ. սեպտեմբերը նախապատրաստել համաձայնագիր միասնական տնտեսական տարածություն ձեւավորելու, մի շարք ուղղություններում համաձայնեցված տնտեսական քաղաքականության, օրենսդրության ներդաշնակության եւ տարիֆների ու առեւտրի միասնական կարգավորիչ միջպետական անկախ հանձնախումբ ստեղծելու մասին: Նախատեսվում է բարձր մակարդակի համատեղ խմբի ստեղծումը: ՌԴ նախագահ Պուտինն ասել է, թե խումբը կգտնվի Կիեւում ու կղեկավարվի Ղազախստանի ներկայացուցչի կողմից: Ուկրաինայի նախագահ Կուչման ասել է, թե կողմերը միասնական տնտեսական տարածության կանցնեն առեւտրի ազատ գոտու ստեղծման միջոցով: Պուտինն ասել է, թե 4 երկրների մաքսային միավորմանը փոխարինող այս նոր կառույցին կարող են միանալ նաեւ ԱՊՀ մյուս երկրները:

«Եթե բոլոր կողմերը գործեն սահմանադրության շրջանակներում, հարցը կլուծվի հօգուտ պետականության»

Գիտնականների հայացքն ընտրական զարգացումներին

«Կարծում եմ՝ հանրապետությունում վիճակն այսօր կայուն է, անկախ ցույցերի, տարբեր հայտարարությունների հանգամանքներից»: Նման համոզմունք հայտնեց երեկ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն **Լավրենտի Բարսեղյանն** ի պատասխան մեր հարցի, թե ինչպե՞ս է գնահատում ՀՀ նախագահական ընտրությունների առաջին փուլին հաջորդած զարգացումներն ու վիճակը: «Մեր հայրենակիցները մասնակցում են այսօրվա միտինգներին, եւ դա կարելի է արդարացնել: Շատերը դեռ ծանր են ապրում, շատերը չունեն աշխատանք: Բայց մեր հասարակության մեջ հետխորհրդային շրջանում նոր հարաբերություններ են ստեղծվել ու զարգանում: Եվ ամեն ինչ միանգամից սպասել չի կարելի»: Այնպես որ, ըստ գիտնականի, սոցիալական արդարության հաստատման տեսանկյունից էլ այսօր անհրաժեշտ է կայունություն, «որպեսզի արդեն իսկ դրված հիմքն ամրապնդվի, եւ առաջընթաց ապահովվի»:

Ընտրությունների երկրորդ փուլի վերաբերյալ իր կանխատեսումներում պրն Բարսեղյանը միանշանակ է. «Գործող նախագահ Ռ. Քոչարյանը կվերընտրվի իր պաշտոնում»:

ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի տնօրեն **Նիկոլայ Հովհաննիսյանի** կարծիքով էլ, փետրվարի 19-ին հետեւած զարգացումները խորը անհանգստություն են առաջացնում հայաստանյան բոլոր խավերի շրջանում: «Հարցականի տակ է առնվում ոչ թե այս կամ այն թեկնածուն, այլ մեր պետության ազգային անվտանգությունը, ներքին կայունությունը: Եվ մեզանից ոչ ոք իրավունք չունի նեղ անձնական, կուսակցական շահերից ելնելով վտանգելու մեր պետականությունը»:

Պրն Հովհաննիսյանի խոսքով, չպիտի թույլ տանք նաեւ, որ մեր հասարակությունը երկփեղկվի: «Խոսքն, անշուշտ, այն մասին չէ, թե ով ում է նախընտրում: Այս կամ այն թեկնածուին իր ձայնը տալու իրավունքն անքակտելի պիտի լինի: Սակայն բոլորովին այլ հարց է, որ կան ուժեր, որոնք կամենում են պարտադրել իրենց տեսակետները: Եվ երբ դրանք չեն ընդունվում, այդ ուժերը խոսում են ժողովրդավարության վտանգված լինելու մասին»:

Իսկ ինչպե՞ս է պատկերացնում պրն Հովհաննիսյանը ելքն այս դրությունից: «Եթե բոլոր կողմերը հարգեն ՀՀ սահմանադրությունը, գործեն բացառապես նրա շրջանակներում, ապա հարցը կլուծվի հօգուտ ո՞ւմ: Հօգուտ մեր պետականության»:

Լ. Գ.

Ալիեւը Բուշի հետ քննարկելու է նաեւ Ղարաբաղի հարցը

ԲԱՔՈՒ, 24 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փետրվարի 26-ին Ադրբեջանի նախագահը Վաշինգտոնում հանդիպում կունենա ԱՄՆ-ի նախագահի հետ: Այդ մասին Հեյդար Ալիեւը կիրակի օրը Բաքվում հայտնել է լրագրողներին՝ Միացյալ Նահանգներ մեկնելուց առաջ: Նա նշել է, որ Ջորջ Բուշի հետ կայանալիք հանդիպմանը քննարկվելու են միջազգային քաղաքականության հարցեր, այդ թվում՝ Իրաքի շուրջ ստեղծված իրավիճակը: Քննարկվելու են նաեւ միջազգային ահաբեկչության դեմ պայքարի, ղարաբաղյան հակամարտության կարգավորման, երկկողմ հարաբերությունների զարգացման հարցերը: Նախագահ Ալիեւը հայտնել է, որ այդ օրը նա Վաշինգտոնում հանդիպում կունենա նաեւ ԱՄՆ-ի փոխնախագահ Ռիչարդ Չեյնիի, պետքարտուղար Քոլին Փաուելի, Սպիտակ տան մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

ԱՄՆ իր այցի մյուս կարեւոր մասը, որը, ըստ նախնական տվյալների, կտեւի մոտ երկու շաբաթ, Հեյդար Ալիեւը համարել է մասնակցությունը «Արեւելք-Արեւմուտք. էներգետիկական միջանցք» խորհրդաժողովին: Հանդիպումը, որը կազմակերպել են Ադրբեջանը, Վրաստանը, Թուրքիան ու ԱՄՆ-ը, տեղի կունենա ԱՄՆ-ի մայրաքաղաքում փետրվարի 24-25-ին: Հեյդար Ալիեւի ասելով, խորհրդաժողովում հիմնականում քննարկվելու են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի եւ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի նախագծերի իրականացմանն առնչվող հարցեր: Համապատասխանաբար 2,95 մլրդ եւ 1 մլրդ դոլար արժողությամբ տարածաշրջանային այս խոշոր էներգետիկական նախագծերը կոչված են ապահովելու Կասպից ծովի էներգապաշարների ելքը համաշխարհային շուկաներ:

Ադրբեջանական պաշտոնական աղբյուրները չեն բացառում, որ ԱՄՆ-ում գտնվելու ընթացքում Հեյդար Ալիեւը բուժզննում կանցնի Քլիվլենդ քաղաքի (Օհայոյի նահանգ) կլինիկայում, որտեղ մոտավորապես չորս տարի առաջ վիրահատել են նրա սիրտը:

Ադրբեջանում ուշիուշով հետեւում են Հայաստանի ընտրություններին

ԲԱՔՈՒ, 24 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանում ուշիուշով հետեւում են Հայաստանի ընտրություններին: Թուրան գործակալությունը նկատում է, որ Ադրբեջանի իշխանությունները անընդհատ մատնացույց են անում Հայաստանի ընտրությունների թերությունները, «փորձում սեւացնել դրանք»: Թուրանի վերլուծաբանները եզրակացնում են՝ «Սեւացնելով Հայաստանի ընտրությունները, Ադրբեջանի իշխանությունները հող են նախապատրաստում Ալիեւի վերընտրության համար: Որովհետեւ երբ միջազգային հանրությունն Ադրբեջանի իշխանություններին կմեղադրի վատ ընտրություններ անցկացնելու մեջ, Ալիեւի կողմնակիցներն էլ միջազգային հանրությանը կմեղադրեն կրկնակի չափանիշներ կիրառելու մեջ, ասելով՝ Հայաստանի ընտրություններն էլ մաքուր չէին, բա ինչո՞ւ ճանաչեցիք դրանց արդյունքը»:

Տուրք տալ սադրանքների՞ն, թե՞ ողջախոհության

Երբ ժողովուրդը դառնում է միջոց

Նայած իշխանությունների հավաստիացումներին, թե իրավիճակը հանրապետությունում լիովին վերահսկելի է եւ թույլ չի տրվի օրենքի որեւէ խախտում, իրավիճակը մնում է լարված: Կիրակի օրը հրավիրված հանրահավաքի փաստն ինքնին խոսում է այն մասին, որ ընդդիմության համար որեւէ նշանակություն չունեն երկրում կարգ ու կանոն պահպանելու իշխանությունների զգուշացումները: Չնայած նախօրոք հայտարարվել էր, որ այդ օրվա հանրահավաքը քաղաքապետարանը չի արտոնել, այնուամենայնիվ, ընդդիմադիրներն այն անցկացրին: Հանրահավաքի արտոնված չլինելը նրանք բացատրեցին նրանով, թե իրականում ոչ թե հանրահավաք էր, այլ հանդիպում ժողովրդի հետ, ինչի իրավունքն իրենք, բնականաբար, ունեին: Սակայն եթե տեղի ունեցածը զուտ հանդիպում էր, ապա առնվազն անհասկանալի է մնում, թե այդ դեպքում ո՞րն են հանրահավաք համարում այսպես կոչված հանդիպման կազմակերպիչները, եւ եթե դա իրոք հանդիպում էր, ապա ինչ էին փետրվարի 19-ին, 20-ին Մատենադարանի մոտ տեղի ունեցածները: Այսինքն՝ փաստացի հանրահավաքը որակելով հանդիպում, դրա կազմակերպիչներն ուղղակիորեն հաստատեցին ուրիշի ձեռքերով կրակից շագանակներ հանելու հանրահայտ տակտիկան, իսկ տվյալ դեպքում շագանակ հանողը հենց այն ժողովուրդն է, որի անունից փորձում է հանդես գալ ընդդիմությունը: Կարճ ասած, եթե անգամ իշխանություններն ուժային միջոցների դիմեին ցրելու համար չարտոնված հանրահավաքը, ինչը լավ է որ տեղի չունեցավ, ապա «կրակներում այրվելու էին» բացառապես հավաքված հանրության ձեռքերը: Դա է վկայում հատկապես այն փաստը, որ հանրահավաքի անցկացումը ընդդիմությունը բացատրեց ոչ ավել, ոչ պակաս... ժողովրդի ցանկությամբ: Թերեւս դա նկատի ուներ երկրի ներքին անվտանգության ու կայունության երաշխավորը սահմանադրությամբ հանդիսացող հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանը՝ իր հեռուստաելույթի ընթացքում նշելով, թե շատ լավ հայտնի են ժողովրդի հետեւում թաքնվելու ձեւերը եւ թաքնվողները:

Այսուհանդերձ, իշխանություններն այլ միջոցների չդիմեցին թույլ չտալու համար դեռ նախորդ օրը Երեւանի քաղաքապետ Ռ. Նազարյանի շուրթերով արտահայտված հիմնավորված հանրահավաքը: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ: Առաջին հայացքից թվում է, թե իշխանությունն ընկրկեց ընդդիմության ճնշումների առջեւ, տեղի տվեց՝ հաստատելով իր խուճապի մեջ գտնվելու փաստը: Ի դեպ, ընդդիմադիրները հենց այսպես էլ մեկնաբանում էին իշխանությունների կեցվածքը: Սակայն իրականում այդպես կլիներ ճիշտ հակառակ պարագայում, երբ «այլ» միջոցառումներ ձեռնարկվեին: Այդ դեպքում ուղղակի կստացվեր այնպես, որ պետական մարմինները տուրք են տալիս որոշ մարդկանց սադրանքներին եւ կրկնելով 1996-ը, զոհ են հանում ժողովրդի դեմ, այն էլ մի իրավիճակում, երբ հասարակական կարգին իրական վտանգ չէր սպառնում: «Հանդիպումը» «կասեցնել» չէր կարելի երկու շատ պարզ պատճառներով եւս, նախ՝ դրանով իշխանություններն ուղղակի կհաստատեին ոմանց այն պնդումը, թե իրենց հաջողվել է ոտքի կանգնեցնել ժողովրդին, այլ ոչ թե նրա իրականում մի փոքր հատվածին՝ այդպիսով հաստատելով, որ իրենց պայքարը հենց ժողովրդի հետ է, այլ ոչ թե քաղաքական դաշտի մի հատվածի: Երկրորդ՝ արտաքին աշխարհում այն տպավորությունն էր ստեղծվելու, թե իշխանությունները բռնանում են հանրության հանդիպումներ, հանրահավաքներ անցկացնելու իրավունքին, որի անմիջական հետեւանքը լինելու էր ձեռք բերված ժողովրդավարական արժեքներից հրաժարվելը, ներքին կայունության խարխլելը:

Պետք է նշել, որ այս տեսակետից անսպասելի վարքագիծ դրսեւորեցին այնպիսի գործիչներ, որոնք նախընտրական շրջանում շատ կոշտ, անզիջում պայքարի կոչեր էին անում: Մասնավորապես խոսքը վերաբերում է Պարույր Հայրիկյանին եւ Արտաշես Գեղամյանին: ԱԻՄ ղեկավարն ուղղակի անընդունելի համարեց հրապարակներից հնչող հեղափոխական կոչերը, մի բան, որ նա չէր անում մինչեւ ընտրությունների ընկած ժամանակահատվածը, իսկ Արտաշես Գեղամյանը հայտարարեց, թե չի ընդունում միտինգային պայքարի ձեւը:

Ի տարբերություն նրանց, նույնքան անսպասելի որոշում կայացրեց ԱԺՄ ղեկավար Վազգեն Մանուկյանը՝ իր զորակցությունը հայտնելով Ստեփան Դեմիրճյանին: Այդ իրավունքը նա անշուշտ ուներ, սակայն խնդիրն այն է, որ այս գործիչը ընտրություններից ընդամենը օրեր առաջ հայտարարեց, թե իրենից արժանի որեւէ մեկին չգիտի զիջելու համար, անգամ քննադատում էր նրանց, ովքեր գաղափարական այլ դաշտում գտնվելով հանդերձ՝ այլ ուժերի հետ համագործակցում են հակառակ դաշտում: Մինչդեռ հիմա, թերեւս խորհրդարան ընկնելու հույսը կապելով այդ նույն «հակառակ» դաշտի հետ, նրանց պաշտպանությամբ է հանդես գալիս: Այն էլ մի իրավիճակում, երբ ստիպված է համագործակցել նաեւ ՀՀՇ-ի հետ, որի հետ չպարզված խնդիրներ ուներ դեռ 1996 թվականից: Սակայն Վազգեն Մանուկյանն, ըստ էության, միակը չէ, որ նման անելանելի վիճակում է:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Վտանգավոր եւ անընդունելի է ժողովրդի մի հատվածին մյուսի դեմ լարելը

ԵՐԵՎԱՆ, 24 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փետրվարի 19-ին կայացած ՀՀ նախագահի ընտրությունների եւ ընդդիմության ներկա կեցվածքի մասին Արմենպրեսի խնդրանքով այսօր իրենց գնահատականները ներկայացրին ՀՀ նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանին սատարող քաղաքական ուժերի ներկայացուցիչներից՝ ՀՌԱԿ ատենապետ ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԸ եւ «Օրինաց երկիր» կուսակցության փոխնախագահ Մհեր Շահգելդյանը:

Ռ. Միրզախանյանը կարեւորեց ընտրություններին ժողովրդի ակտիվ մասնակցությունը, ինչը, ըստ նրա, վկայում է ժողովրդի քաղաքականապես ակտիվ լինելու, ընտրությունների հետ երկրի ապագան կապելու մասին. «Սա նաեւ նշանակում է, որ ժողովրդավարության զարգացումը մեզանում լուրջ հեռանկար ունի»: Ըստ ՀՌԱԿ ատենապետի, ակնհայտ է, որ ԿԸՀ-ի հրապարակած պաշտոնական թվերը, ընդհանուր առմամբ, օբյեկտիվորեն ներկայացնում են ուժերի դասավորվածությունը, իրերի վիճակը: «Փետրվարի 19-ի ընտրություններն իրապես լուրջ, դրական քայլ են դեպի ընտրական գործընթացի օբյեկտիվության վերականգնումը՝ 1996 եւ 1998 թ.թ. նախագահական ընտրությունների համեմատությամբ: Այս ընտրությունների ընթացքում վիճակը շատ ավելի օբյեկտիվ է: Եվս մեկ կարեւոր հանգամանք. ընտրությունների ընթացքում չկար մի խիստ բացասական երեւույթ, որն առկա էր նախորդ երկու ընտրությունների ընթացքում՝ ուժային մարմինների եւ «հրացանավոր մարդու» վճռորոշ, չափից ավելի ակտիվ դերը»,- ներկայացրեց Ռ. Միրզախանյանը, նկատելով, որ առկա էին նաեւ խախտումներ, թերացումներ՝ սակայն դրանք երկուստեք էին: Դա եւս, ՀՌԱԿ ատենապետի գնահատմամբ, նոր երեւույթ է, որովհետեւ նախկինում խախտումները կատարվում էին միայն իշխանությունների հետ: «Ըստ մեր դիտարկումների, այսպես կոչված, ընդդիմադիր կեցվածք որդեգրած թեկնածուների կողմից, ավելի շատ էին խախտումների փորձերը, քան գործող նախագահի հետաքրքրությունները ներկայացնող անձանց կողմից»:

Հանրապետության ներկայիս իրավիճակին անդրադառնալով, Ռ. Միրզախանյանը նշեց, որ որոշ քաղաքական անձանց հետաքրքրությունն է՝ ապակայունացնել իրավիճակը երկրում եւ դրա շնորհիվ շահեկան վիճակում հայտնվել նախագահական ընտրությունների երկրորդ փուլի ընթացքում: «Սա խիստ վտանգավոր է, անընդունելի, մերժելի եւ մենք դրա դեմ կպայքարենք, քանի որ նման կեցվածքը, անպատասխանատու հայտարարությունները կարող են հանգեցնել այն բանին, որ մեր ժողովրդի մի որոշակի զանգվածը բռնամաբար կտրամադրվի մյուս մասի նկատմամբ: Դա ոչ թե հակասություն է քաղաքական գործիչների, թեկնածուների եւ կուսակցությունների միջեւ, այլ ժողովրդի որոշակի զանգվածների միջեւ, դա մերժելի եւ անընդունելի է: Սա ուղղակիորեն անդրադառնում է երկրի անվտանգության, Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման, հանրապետության տնտեսական, սոցիալական զարգացման հեռանկարների վրա»,- նկատեց Ռ. Միրզախանյանը:

Մհեր Շահգելդյանը նույնպես, նախորդ ընտրությունների համեմատ առաջընթաց արձանագրում է: Ըստ նրա, դրական կարելի է գնահատել քարոզարշավի իրականացման ազատությունը՝ թեկնածուների ծրագրերի, մոտեցումների ազատ ներկայացման հնարավորությունը, սակայն, քարոզարշավի ընթացքում նկատվեցին նաեւ բռնարարքներ՝ Արտաշատի դեպքերը, Արարատում «Օրինաց երկրի» եւ ՀՀԿ-ի գրասենյակների վրա հարձակումը, ուր տեղակայված էր Ռ. Քոչարյանի նախընտրական շտաբը:

Ինչ վերաբերում է ընտրակեղծիքների, խախտումների առկայությանը, ապա Մ. Շահգելդյանի խոսքերով, նկատվել են նման դեպքեր, սակայն դրանց տոկոսը բավականաչափ ցածր է: «ԵԱՀԿ դիտորդական առաքելության կողմից նշված են 16 ընտրական տեղամասեր, որոնցում նրանք արձանագրել են կեղծիքներ. եթե հաշվենք, որ ընտրակեղծիքները եղել են 100 տոկոս, ինչն անհնար է, ապա դա կկազմի մոտ 32 հազար ձայն, որը կազմում է մասնակիցների 2-2.5 տոկոսը:

Անցումային երկրում, ինչպես նաեւ մի շարք կայացած երկրներում սա բավական նորմալ ցուցանիշ է: Պետք է հաշվի առնենք, որ տարբեր քաղաքական ուժեր են մասնակցել եւ նրանց առանձին ներկայացուցիչներ փորձել են որոշակի գործողություններ կատարել՝ կեղծիքների առումով»,- նկատեց Մ. Շահգելդյանը:

«Օրինաց երկրի» փոխնախագահն անդրադառնալով ընդդիմության գործողություններին, նշեց, որ նրանց կողմից ընտրությունները կասկածի տակ դնելը եւ հայտարարությունները, թե Ստեփան Դեմիրճյանը հավաքել է 70 տոկոս՝ անտրամաբանական եւ ոչ ողջամիտ է: Ըստ Մ. Շահգելդյանի, եթե հանրահավաքներն իրականացվում են օրենքի շրջանակներում, դրանք բնականոն ժողովրդավարական ընթացակարգեր են, բայց այս հանրահավաքների ընթացքում հնչում են սպառնալիքներ, հայհոյանքներ, իշխանությունն ուժով փոխելու որոշակի կոչեր, ինչն անթույլատրելի է: Նա տեղեկացրեց, որ ընտրությունների օրը եւ դրանից հետո սպառնալիքներ, ահաբեկումներ են եղել «Օրինաց երկրի» անդամների նկատմամբ: Հնչում են սպառնալիքներ՝ օդանավակայանը փակելու, Քոչարյանին սատարող անձանց հետագայում պատժելու. սա, ըստ Մ. Շահգելդյանի, ոչ այլ ինչ է, եթե ոչ բռնարարք: Բացի այդ, նախկին իշխանության մի շարք ներկայացուցիչներ են մասնակցում այդ հանրահավաքներին, եւ նրանց կեցվածքը կարելի է գնահատել որպես ռեւանշի փորձ:

Իսկ տարբեր քաղաքական ուժերի եւ նրանց տասնյակ հազարավոր անդամների հասցեին արված կոչերը, թե նրանք անհասկացող են եւ այլն, Մ. Շահգելդյանի կարծիքով, ազգային շահերի դեմ են: «Հիմա գնում ենք երկրորդ փուլի. պետք է հասկանանք, որ ունենք կայունության, ազգային անվտանգության խնդիր, Եվրոպայի հետ մեր հարաբերությունների խնդիր, եւ արհեստականորեն հասարակության մի մասին մյուսի հետ բախման դրդելով ոչ մի դրական արդյունքի չենք կարող հասնել»:

Գեղամյանը երկրորդ փուլում չի պաշտպանում ոչ մեկին

Սկիզբը էջ 1

Մենք չենք կարող ցուցաբերել անսկզբունքայնություն եւ աջակցել անօրինական երկրորդ փուլի անցկացմանը»: Այսինքն, ըստ Արտաշես Գեղամյանի նախընտրական շտաբի հայտարարության, այս ընտրություններն անօրեն էին, եւ դրանց արդյունքում նախագահի դարձածը լեգիտիմ չի կարող լինել, ուստի եւ չի ապահովի պետական իշխանության արդյունավետ գործունեություն:

Ընթերցելով նախընտրական շտաբի հայտարարությունը՝ Ալեքսան Կարապետյանն անցավ արդեն բազմիցս հրապարակված փետրվարի 19-ի ժ. 17.00-ին մի քանի թեկնածուների ստորագրած հայտարարության ընթերցմանը:

Այս ամենից հետո խոսեց հանրապետության նախագահի թեկնածու Արտաշես Գեղամյանը: Անդրադառնալով ընտրություններին՝ պրն Գեղամյանը համառոտ ներկայացրեց այն վտանգները, որոնք, ըստ իրեն, դարանակալել են այսօր (չասաց՝ ո՞ւմ-Ա. Հ.):

Ըստ Արտաշես Գեղամյանի, ակնհայտ է, որ գործող իշխանությունները գիտակցում են, «եթե ընդդիմադիր ուժերը հաղթանակ են կրում, ապա դա հղի է իրենց համար շատ ծանր հետեւանքներով, ուղղակիորեն իրենք գիտեն, որ գնդակահարվելու են»:

Արտաշես Գեղամյանը շարունակեց, որ «իշխանություններն այդ ամենն իմանալով՝ իրենք մահու-կենաց կռիվ են տեսնում առաջիկա ընտրությունների ժամանակ»:

«Պատահական չէ, որ փետրվարի 17-ին ես, դիմելով պրն Քոչարյանին՝ ասացի, որ ձեզ համար ամենաերանելի միասնական թեկնածուն Արտաշես Գեղամյանն էր, որ կապահովեր ձեր առոք-փառոք հեռանալը, ենթատեքստը դա էր», հավելեց պրն Գեղամյանը:

Ըստ նրա, ամենավտանգավոր հետեւանքներով հղի ընտրություններ են սպասվում: Պատահական չէ նաեւ, որ, համաձայն Արտաշես Գեղամյանի, անօրինական անցկացված առաջին փուլից հետո ամեն գնով ուզում են երկրորդ փուլ անցկացնել: «Եթե այդ խայծը կուլ է տալիս ընդդիմադիր դաշտը, կնշանակի նա վավերացնում է, որ պրն Քոչարյանի օգտին 700 հազար ձայն է տրվել առաջին փուլում, մինչդեռ մենք գիտենք, որ դա բացարձակ կեղծիք է», եզրակացրեց պրն Գեղամյանը:

Եվ որպես իր ասածների արդյունք՝ ներկայացրեց իրենց դիրքորոշումն այն առումով, որ իրենք չեն ուզում մասնակցել անօրինական գործընթացներին, այն է՝ երկրորդ փուլին, քանի որ առաջինն անց է կացվել գործող օրենքների կոպիտ խախտումներով: Եվ որպես օրինակ, Արտաշես Գեղամյանը հավաստեց, թե իր օգտին տրված ձայներով քվեաթերթիկներն ուղղակի պատռվել են:

Պրն Գեղամյանը նաեւ վստահություն հայտնեց, թե ամեն ինչ արվել է Գեղամյանին երկրորդ փուլ չթողնելու համար, քանի որ Քոչարյանի պարտությունն այդ դեպքում անխուսափելի էր լինելու: Իսկ հիմա էլ «իրենք (ենթադրվում է՝ իշխանությունները- Ա. Հ.) գլխներին են խփում, թե այս ինչ դալաբ արեցինք, որովհետեւ միակ երաշխավորը, որ Հայաստանում արյուն չի թափվի, Արտաշես Գեղամյանն էր»:

Իր փրկարար դերի մասին եւս մեկ անգամ հիշեցնելուց հետո Արտաշես Գեղամյանն արագ հեռացավ՝ ուշադրություն չդարձնելով լրագրողների զարմացական արտահայտություններին:

Այսպիսով կարելի է ամրագրել, որ Ա. Գեղամյանը՝ 1) չի միանում Ստ. Դեմիրճյանի ճամբարին, 2) հետեւաբար նա դեմ է քաղաքականությունը փողոց տեղափոխելու վերջինների մարտավարությանը, 3) դեմ է ընտրությունների 2-րդ փուլի անցկացմանը, պահանջելով վերընտրություն սկզբից: Այլ խոսքով՝ նա որդեգրել է տեղում ակտիվ դոփելու մարտավարություն:

Այնուհետեւ Ալեքսան Կարապետյանն ավելացրեց, որ փետրվարի 25-ին իրենք ԿԸՀ կներկայացնեն ընտրությունները չեղյալ հայտարարելու նախագիծ, ապա կդիմեն նաեւ Սահմանադրական դատարան:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետութեան 47
Ֆաքս: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Ընտրություններ

Հնարավո՞ր էր խուսափել ընտրությունների երկրորդ փուլից

Նախագահական ընտրությունները թեւակոխեցին երկրորդ փուլ: Չիրականացավ ինչպես գործող նախագահի, այնպես էլ ընդդիմության ներկայացուցիչների կանխատեսումներն ու սպասելիքները: Առաջինները չափից ավելի վստահ էին, որ երկրորդ փուլի անհրաժեշտություն չի լինի եւ իրենց թեկնածուն կհաղթի ձայների գերակշիռ մեծամասնությամբ: Երկրորդների՝ այս օրերին հնչող հայտարարություններն ընդդիմության թեկնածուի հաղթանակի մասին ավելի շուտ հասարակական կարծիքի վրա ազդեցություն թողնելու նպատակ ունեն: Իրականում ընդդիմությունը նույնպես չէր կասկածում, որ Ռոբերտ Քոչարյանը հավաքելու էր ամենաշատ ձայները, եւ համոզված պնդում էր, որ գործող նախագահը դիմելու է կեղծիքների առաջին փուլում ընտրված հայտարարվելու համար: Դա տեղի չունեցավ: Այժմ դիտարկենք այն պատճառները, որոնք խանգարեցին գործող նախագահին հաղթել ընտրությունների առաջին իսկ փուլում:

Առաջին պատճառը Ռոբերտ Քոչարյանի նախընտրական շտաբի չհամակարգված քարոզչությունն էր: Բացի նախագահի նախընտրական այցերը նախապատրաստելուց, լուսաբանելուց եւ նախընտրական պլակատներ փակցնելուց, ըստ էության, որեւէ այլ քարոզչություն չտարվեց:

Օրինակ՝ ընտրողները մեծամասամբ տեղյակ չեն կամ չեն հավատում անցնող 5 տարիների ընթացքում տեղի ունեցած դրական տեղաշարժերին՝ լինի դա արտաքին քաղաքականության, տնտեսության ասպարեզում թե հատկապես կենցաղում: Ո՞վ կամ ովքե՞ր պետք է այդ ամենը ներկայացնեին հասարակ մարդկանց:

Նախընտրական շտաբում գիշեր-ցերեկ նստելու փոխարեն ավելի ճիշտ չէ՞ր լինի տեղային հանդիպումներ կազմակերպել յուրաքանչյուր համայնքում, թաղամասում, որտեղ նախագահին սատարող քաղաքական ուժերի ներկայացուցիչները, մտավորականները, հեղինակություն եւ հարգանք վայելող մարդիկ զրուցեին մարդկանց հետ, բացատրեին դժվարությունները, ներկայացնեին կատարվածը եւ կատարվելիքը: Իսկ որ ներկայացնելու բաներ կան, միանշանակ է. գործարար մթնոլորտի բարելավումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, գազամատակարարման վերականգնումը, շատ վայրերում շուրջօրյա ջրամատակարարման ապահովումը:

Սա չարվեց: Եվ այլեւս կարեւոր չէ, պատճառն անկազմակերպվածությո՞ւնն է, թե՞ սեւագործ աշխատանք կատարել չցանկացողների բացակայությունը:

Հարկ էր նաեւ մարդկանց ազնվորեն ասել, որ արվածն ընդամենը սկիզբն է, այլ ոչ թե վերջնական արդյունքը կամ մեծ նվաճում: Դա նույնպես չարվեց: Ուստի պատահական չէր, որ այն բնակավայրերից, որտեղ իրականացվել էին առաջին բարեփոխումները, գործող նախագահը ստացավ ակնկալվածից զգալիորեն քիչ ձայներ:

Հաջորդը: Լիովին բացակայում էր հակաքարոզչությունը: Բոլոր կողմերից նախագահի հասցեին հնչող քննադատություններին եւ շատ հաճախ հերյուրանքներին Ռոբերտ Քոչարյանը չէր պատասխանում: Դա գուցե ճիշտ էր այն առումով, որ նախագահն անձամբ չէր պատասխանում: Սակայն պատասխանները պետք է տրվեին դարձյալ նրա թիմի եւ կողմնակիցների կողմից: Ընդ որում, դա նույնպես պետք է համակարգված լիներ եւ ուղղորդվեր նախընտրական շտաբից:

Հակառակորդների թերությունները եւ խոցելի տեղերը հայտնաբերելն ու քննադատելը բնավ էլ «սեւ տեխնոլոգիա» չէ, ինչը կիրառվում է Արեւմուտքի ամենաժողովրդավարական երկրներում: Նախընտրական քարոզչության այս կարեւոր բաղադրիչը նույնպես անտեսված էր: Խոսքը ոչ թե այս կամ այն լրագրողի կամ լրատվամիջոցի դրսեւորած ինքնուրույն գործելակերպի, այլ դարձյալ համակարգված մոտեցման, այս ուղղությամբ կատարված աշխատանքի մասին է, ինչը նույնպես չկար: Մի՞թե նախագահի մյուս բոլոր թեկնածուները քարոզարշավում կամ դրանից առաջ՝ իրենց գործունեության ժամանակ թույլ չեն տվել այնպիսի սխալներ, որոնք բացահայտելն ու հասարակության ուշադրությունը դրանց վրա սեւեռելը լրջորեն կազդեր նրանց վարկանիշի վրա:

Հաջորդ պատճառը մարդկանց առայժմ ծանր սոցիալական կացությունն է: Ի՞նչ է նշանակում դա: Առնվազն այն, որ դժգոհությունն ուղղված է լինելու դեպի գործող նախագահը, իսկ ձայները՝ դեպի ընդդիմությունը: Այն, որ նախագահական ընտրությունների արդյունքում երկրորդ տեղը հայտնվեց Ստեփան Դեմիրճյանը, այս առումով պատահական չէր: «Ինչո՞ւ են ընտրում Ստեփան Դեմիրճյանին» հարցին որեւէ հիմնավոր պատասխան չի տրվում: Կարծում ենք, որ «Նա Կարեն Դեմիրճյանի տղան է» պատասխանն այդպիսին չի կարելի համարել: Հետեւաբար, ծանր սոցիալական վիճակի մեջ գտնվող մարդկանց՝ իրենց ձայները Ստեփան Դեմիրճյանին տալու միակ պատճառը խորհրդային տարիների կարոտախտն է եւ դժգոհությունը գործող իշխանություններից: Սա, իհարկե, օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրողություն է, բայց դա չի նշանակում, թե օբյեկտիվ պատճառ է գործող նախագահի ձայները նվազելու համար: Դա կարելի էր կանխել կամ սահմանափակել դարձյալ նույն՝ տեղական նշանակության հանդիպումների, մարդկանց հետ շփումների միջոցով:

Ընդ որում, ինչպես այս, այնպես էլ նախագահի մասնակցությամբ հանդիպումների ժամանակ նախընտրելի էր հնարավորինս քիչ օգտվել տարբեր տրամաչափի պետական չինովնիկների ծառայություններից, որոնց նկատմամբ բնակչության մեծ մասը ընդգծված դժգոհություն ունի:

Եվ վերջինը: Նախընտրական քարոզարշավի ժամանակ եւ հատկապես քվեարկության օրն իրենց չափից ավելի ազատ եւ ինքնավստահ էին զգում այսպես կոչված թաղային հեղինակությունները, որը նույնպես վնասեց Ռոբերտ Քոչարյանի վարկանիշին:

Վերոնշյալը միայն մեր դիտարկումներն են եւ բնականաբար չեն կարող ամբողջական լինել: Սակայն վստահ ենք, որ եթե այս ամենի վրա ուշադրություն դարձվեր քարոզարշավի ընթացքում, ընտրությունների արդյունքներն այլ կլինեին եւ երկրորդ փուլի անհրաժեշտություն չէր առաջանա:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կանանց դիտորդական առաքելությունը մատնանշում է նաեւ տեխնիկական-կազմակերպչական վրիպումներ

Նույնիսկ թափանցիկ արկղերը չփրկեցին մեզ նախագահական ընտրությունների տարաբնույթ ընթացքից ու դրանց վերաբերյալ մեկնաբանություններից: Ավելին՝ այն, թե իրականում ինչպիսին է եղել ընտրաընթացքը, այսօր ավելի դժվար վերլուծելի է ու անթափանց: Եվրախորհրդի եւ ԱՊՀ առաքելություններից զատ, որոնք, ի դեպ, իրարամերժ կարծիքներ արտահայտեցին, նախագահական ընտրությունների ընթացքին հետեւել են նաեւ տեղական հասարակական կազմակերպությունները: Մասնավորապես, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան 261 ներկայացուցիչներով դիտորդական առաքելություն է իրականացրել հանրապետության ընտրատարածքների մոտ 8 տոկոսում՝ 140 ընտրատեղամասեր Երեւանում, Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում, Սպիտակում, Ստեփանավանում, Իջեւանում, Աշտարակում, Մասիսում, Արտաշատում, Արարատում: Ընտրատեղամասերի աշխարհագրությունը եւ դիտորդների մասնակցության աստիճանը վստահելի եւ դիտարկության արժանի են դարձնում կազմակերպության եզրահանգումները: Ասոցիացիայի հետ ընտրությունները «դիտել» են նաեւ կանանց կազմակերպությունների անկախ ֆորումի 6 ուրիշ միություններ եւս՝ «Սուրբ Սանդուխտ կույսի անվան տիկնանց», «Քրիստոնյա կանանց», «Մայր եւ մանուկ», «Մարդկային կայուն զարգացման», «Շողեր», «Համագործակցություն հանուն խաղաղության եւ հասարակության ներդաշնակ զարգացման» հասարակական կազմակերպությունները:

Ի դեպ, մինչ ընտրություններն արդեն Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան 500 կանանց եւ 500 տղամարդկանց հարցումների միջոցով արդեն ընտրազանգվածի տրամադրությունները շոշափելու փորձ արել էր: Ուշագրավն այն է, որ թեեւ հարցվածների 76 տոկոսը լիովին կամ մասամբ հետաքրքրվում է քաղաքականությամբ, բայց նրանց դարձյալ գերակշիռ մասը՝ 61 տոկոսը, ասել է, որ չի հավատում արդար ընտրությունների հնարավորությանը:

Դիտորդական մյուս առաքելությունների նման իբրեւ վրիպում կանայք առաջինը մատնացույց են անում ընտրացուցակները: Համալսարանական կանանց ասոցիացիայի նախագահ Ջեմմա Հասրաթյանը պատմեց, որ իրենք բազմիցս արձանագրել են ընտրացուցակների անկատարության դեպքեր: Բացի նրանից, որ դրանցում տեղ են գտել մեռածների եւ երկրից բացակայողների անունները, արձանագրվել են օրինակներ, երբ ընտանիքի անդամների մի մասը գրանցված է եղել ցուցակներում, մյուս մասը՝ ոչ: Շատ դեպքերում մեծահասակ, տարեց մարդիկ, իրենց անունը չգտնելով, դատարան չեն էլ դիմել, հետ են դարձել: Նախագահական ընտրությունների ընթացքում կոպտորեն խախտվեց նաեւ հաշմանդամների եւ հիվանդանոցներում ստացիոնար բուժում ստացող ընտրողների իրավունքը: Ընտրական օրենսգիրքը զարմանալիորեն անտեսել է նրանց քվեարկելու հնարավորություն ընձեռելու ուղիները: Նույնիսկ բազմաբնակարան շենքերի առաջին հարկերում ապրող հաշմանդամները չքվեարկեցին: Նրանց սայլակները ընտրատեղամաս հասցնելու եւ բարձրացնելու ոչ մի միջոց նկատի չէր առնվել: Եվ հաշմանդամներն ու հիվանդանոցում բուժվողները պարզապես դուրս մնացին այս կարեւոր գործընթացից:

Կանանց դիտորդական առաքելությունը մատնանշում է նաեւ այնպիսի իրողություններ, որոնց անհրաժեշտությունն առավել էական բացթողումների պայմաններում կարելի էր եւ չնկատել: Դրանք հիմնականում տեխնիկական-կազմակերպչական թերություններ են, որոնք, նրանց համոզմամբ, նույնպես խաթարել են ընտրությունների բնականոն ընթացքը: Այսպես, Աբովյանում, Աշտարակում նախընտրական շտաբները տեղավորել են ջեռուցվող, լուսավոր կառույցներում, իսկ ընտրատեղամասերում, ուր հանձնաժողովների անդամների 60 տոկոսը կանայք էին, սառն ու անհյուրընկալ եւ անհարմար պայմաններ են եղել: Երեւանի թիվ 3 դպրոցում, Աբովյան քաղաքի նախկին հանրախանութում, «Հաղիս» համալսարանում եւ թիվ 4 միջնակարգ դպրոցում ընտրատեղամասերի ոչ ճիշտ ընտրության ու տեղաբաշխման պատճառով ընտրողների կուտակումներ ու հերթեր են գոյացել: Եվ նույնիսկ դիտորդները քվեարկության ընթացքին հետեւելու հնարավորությունից զրկվել են:

Շատ տեղերում բնակչությունը չի տեղեկացվել ընտրատեղամասերի տեղափոխման վերաբերյալ:

Ըստ առաքելության դիտարկումների, Աշտարակի, Աբովյանի, Վաղարշապատի մի շարք ընտրատեղամասերի մոտ օրվա երկրորդ կեսին հայտնվել են հանձնաժողովների հետ ոչ մի առնչություն չունեցող տղամարդիկ, որոնց ներկայությունը զուտ հոգեբանորեն բացասաբար է ներգործել ընտրողների ու վստահված անձանց վրա:

Առանձնացվել է մի այլ հանգամանք եւս. որոշ տեղամասային հանձնաժողովներում զինվորականներին թույլատրել են մասնակցել քվեարկությանը հենց ընտրությունների օրը ներկայացրած ցուցակներով: Հայտնի է, որ այդ ցուցակները 20 օր առաջ պիտի լինեն ընտրատարածքային հանձնաժողովներում, եւ նման «մոռացկոտությունը» ծախ քվեարկությունների լայն ճամփա է բացում:

Տեխնիկակազմակերպչական թերացումների այս բազմաբաղադրիչ փունջը ներկայացնելով հասարակությանը, կանանց դիտորդական առաքելությունը պնդում է, որ քվեարկությունը խաղաղ, կանոնավոր ու ճիշտ հունով ուղղորդելու համար այս դիտողությունները պիտի նկատի առնել նախագահական ընտրությունների երկրորդ փուլում:

Մի ուշագրավ նկատառում եւս, որ առաջարկում են կանայք: Նրանց կարծիքով, ընտրությունների արդյունքների վրա ազդեցության չափանիշ պետք է համարել ոչ թե խախտումների որակական ու քանակական բնութագիրը, այլ դրանց ընթացքի արդարության վերաբերյալ ընտրազանգվածի համոզմունքի եւ վստահության աստիճանը: Իրողություն, որն, ի դեպ, նույնպես դժվար հաշվարկելի է, ինչպես ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների իրական եւ ոչ իրական լինելու պարզաբանումները:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԿԸՀ

Դիտորդները կմնան մինչեւ մարտի 15-ը

Երեկ ԿԸՀ նախագահ Արտակ Սահրադյանն ընդունել է ԵԱՀԿ դիտորդական խմբի ներկայացուցիչներին: Ինչպես տեղեկացնում է ԿԸՀ լրատվական ծառայությունը, խմբի ղեկավար Պիտեր Այքերը հանդիպման ժամանակ նշել է, որ ԵԱՀԿ դիտորդական առաքելությունը մտադիր է շարունակել գործունեությունը նաեւ երկրորդ փուլում: ԿԸՀ նախագահը տեղեկացրել է, որ հավատարմագրված դիտորդական առաքելությունների գործունեության ժամկետը երկարաձգվել է մինչեւ 2003 թ. մարտի 15-ը:

Պ. Այքերը հայտնել է նաեւ, որ հանդիպել է Ստեփան Դեմիրճյանին: Վերջինիս հետ պրն Այքերը խոսել է հանրահավաքների ժամանակ հակասահմանադրական կոչերի ու հայտարարությունների մասին, նշելով, որ ժողովրդավարական երկրում բռնությունն ու սպառնալիքը տեղ չունեն:

ԿԸՀ լրատվական ծառայությունը տեղեկացրել է նաեւ, որ Արտակ Սահրադյանն ընդունել է Հայաստանում ԵԱՀԿ գրասենյակի փոխտնօրեն Ի. Կոնկեւիչին: Քննարկման հիմնական թեման եղել են թափանցիկ քվեատուփերը, որ դրանք իրականում տեղավորում են ոչ թե 4000, այլ առավելագույնը 2000 թերթիկ: Ըստ Կոնկեւիչի, խորհրդարանական ընտրությունների համար ԵԱՀԿ-ն դոնոր կազմակերպությունների միջոցով կհոգա երկրորդ քվեատուփի ձեռքբերման խնդիրը:

Հայ արիական միաբանության ազգային խորհրդի կոչը

Հայ արիական միաբանության ազգային խորհուրդը վրդովմունք է արտահայտում նախագահական ընտրությունների ընթացքում երկրում տիրող անառողջ մթնոլորտի համար: Խորհրդի գնահատմամբ, «իրենց գոփած փողերից հղփացած որոշ «գործարար-բարեգործներ» քրեական հորջորջվող անհայրենիք տարրերի հետ այլանդակեցին ընտրությունների ողջ դրական ընթացքը, որը թույլ տվեց օտար երկրներին միջամտել հայոց պետության ու ազգի ներքին գործերին: Մենք դեմ ենք ազգի կամքին բռնանալուն, ցանկացած ներազգային անարդարության ու հատկապես այն պաշտպանողների կողքին ենք, սակայն առավել դեմ ենք օտարների որեւէ միջամտության, որը մշտապես ավարտվել է հայոց անկախության կորստով»:

Խորհուրդը մտահոգիչ է համարում հետընտրական ընթացքը, իր անկանխատեսելի հետեւանքներով: Իշխանություններն ու ընդդիմությունը թույլ են տալիս աններելի սխալներ, «հաճախ որդեգրում են օտարահաճ կեցվածք»:

Խորհուրդը կոչ է անում հայաստանյան ու սփյուռքի ազգայնական ուժերին համախմբվել այս նախընտրական ժամանակաշրջանում եւ պաշտպանել հայ ազգը պատվազրկումից, իսկ հայրենիքը՝ հնարավոր կործանարար վտանգներից:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակ» պետական հիմնարկի աշխատակիցները ցավակցում են Վարազդատ Ավոյանին սիրելի եղբոր

ՖԵՐԳԵՆ ԱՎՈՅԱՆԻ

վաղաժամ մահվան կապակցությամբ:

Ազգային

Որո՞ւն մենաշնորհն է Հայկական դատը

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

Մեր թերթը ժամանակին պատշաճ լրատվություն տվել է փետրվարի 1-2-ը Փարիզում ՀՅԴաշնակցության կազմակերպած «Պրո-Արմենիա» միջազգային համաժողովի մասին: Բացի մեր եւ այլ թերթերի տպագրածից, Հայաստանի հեռուստադիտողը բազմիցս առիթ է ունեցել այդ համաժողովի մասին լուսաբանություն ստանալու տարբեր հեռուստածրագրերից, որոնցից վերջինը՝ փետրվարի 21-ին, Հանրային հեռուստատեսությամբ, շուրջ կես ժամ: Դատելով համաժողովի մասնակիցների ներկայացուցչական-պաշտոնական մակարդակից Արգենտինայի նախկին նախագահ, ՀՀ եւ ԼՂՀ խորհրդարանների նախագահներ, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս, ՀՀ արտգործնախարար եւ այլք, համաժողովը եղել է իսկապես տպավորիչ, իսկ 22 տարբեր երկրներից ժամանած մասնակիցների առկայությունը՝ հուսադրող: Սակայն, դժբախտաբար, սփյուռքից ստացված արձագանքները, մեղմ ասած, այդքան էլ վարդագույն չեն ներկայացնում տեղի ունեցածը եւ, առավել կարեւորը, ցույց են տալիս, որ համաժողովը չի ունեցել համազգային ցանկալի մակարդակը:

Արդարեւ, որո՞ւ մենաշնորհն է Հայկական դատը. ոեւէ ամբողջ դատողութեան տէր հայուն համար, որ մեր ազգային հարցերը կը դիտէ համապարփակ հորիզոնի մը վրայ, պատասխանը շատ պարզ է. Հայկական դատը ամբողջ հայութեան մենաշնորհն է ու միեւնոյն ատեն՝ պատասխանատուութիւնը:

Սակայն տարբեր կարծիք ունենալ կը թուին կազմակերպիչները «Պրո-Արմենիա» միջազգային ժողովին, որ կայացաւ ընթացիկ տարուան փետրուար 1-2-ին, Փարիզի մէջ, ֆրանսական ծերակոյտի «Քլեմանսօ» սրահին մէջ: Գոնէ այդ եզրակացութիւնը կարելի է հետեւցնել անոնց գործելակերպէն: Արդարեւ, «Պրո-Արմենիա» համաժողովին նախաձեռնողները եղած են Եւրոպայի, Ամերիկայի եւ Միջին Արեւելքի Հայ դատի յանձնախումբերը, իմա՝ Դաշնակցութեան տարբեր յանձնախումբերը: Այլապէս խիստ գնահատելի գործ մը, որուն շուրջ համախմբուած են քսան երկիրներէ շուրջ 80 հայ եւ օտար քաղաքական գործիչներ՝ Արժանթինի նախկին նախագահ Ալֆոնսինէն մինչեւ Ռուսաստանի նախկին վարչապետ Ռիժկովը: Պատկառելի համախմբում մը, անկասկած, որ եթէ աւելի բաց միտքով կազմակերպուած ըլլար, պիտի գտնէր իր քաղաքական դրական արձագանքները աշխարհի տարբեր տարածաշրջաններու քաղաքական հրապարակներուն վրայ:

Երեք նիստերու ընթացքին քննարկուած են հայութեան ճակատագրին հետ առնչուող կարգ մը հիմնահարցեր: Առաջին նիստը յատկացուած է Հայ դատին եւ Ցեղասպանութեան ճանաչման, երկրորդ նիստը՝ համաշխարհայնացումի հոլովոյթին մէջ Հայաստանի կովկասեան տնտեսութեան ընդգրկման, իսկ երրորդ եւ վերջին նիստը նուիրուած է 21-րդ դարուն Հայաստանի եւ հայութեան սահմանուած ճակատագրին:

Փարիզի մէջ կայացած այս համաժողովը իր տիտղոսով, կերպով մը ոգեկոչած է նաեւ 1900-էն մինչեւ 1908 հրատարակուած «Պրօ-Արմենիա» երկշաբաթաթերթը, խմբագրութեամբ Պիէր Քիյարի, որ իր շուրջ համախմբած էր Ժան Ժորէսի, Անաթոլ Ֆրանսի եւ Քլեմանսոյի նման հայասէր մտաւորականներ ու քաղաքական գործիչներ, որոնք իրենց ոգեւորութիւնը եւ հայութեան ճակատագրին աղերսումը ընդհանրապէս կը ստանային Արշակ Չօպանեանի նման անխոնջ մտաւորականի մը եւ ազգային գործիչի մը դիմումներէն ու մշտական կապերէն:

Այսքանը, բնականաբար, գնահատելի երեւոյթ եւ իրագործում:

Սակայն, երբ վերջին շրջանին հրապարակ ելաւ «Հայ-թրքական հաշտեցման յանձնախումբը», ամէն կողմէ ընդվզումի ալիքներ ծայր տուին, բողոքներ լսուեցան եւ դատապարտութեան արտայայտութիւններ բանաձեւուեցան նախաձեռնողներուն դէմ, որովհետեւ անոնք աւելի ինքնակոչ մարդիկ էին եւ չունէին ներկայացուցչական բնոյթ. այս արդարացի մեղադրութեանց վրայ դաշնակցական շրջանակները կ'աւելցնէին նաեւ իրենց անտեսուած ըլլալու փաստը:

«Պրօ-Արմենիայի» կազմակերպման մէջ Դաշնակցութիւնը, իր կարգին, հանդէս կու գայ միեւնոյն գործելակերպով, անտեսելով հայութեան բաղկացուցիչ այլ շրջանակներն ու քաղաքական դէմքերը: Ի տես այս գործելակերպին՝ հանգիստ պիտի չգտնեն մանաւանդ ոսկորները Արշակ Չօպանեանի, որուն համազգային լայն երազը կը վերածուէր խմբակային նեղ մենաշնորհի մը:

Այս զանցումին դիմաց գուցէ ճիշդ չըլլար մեղադրանքի տակ առնել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի պետական ներկայացուցիչները, որոնք ամբողջական ճանաչումը չունին սփիւռքի գործող շրջանակներուն եւ գործիչներուն՝ այն աստիճան, որ Հայաստանի Ազգային ժողովի նախագահը՝ Արմէն Խաչատրեան, երջանիկ գոհունակութեամբ կը յայտարարէ, թէ «ժողովը համագործակցութեան նոր իրողութիւն մը կը պարզէ՝ ընդգրկելով հայ ազգի բոլոր հատուածները»:

Սակայն վստահ ենք, թէ ժողովին մասնակից Հայաստանի արտաքին գործոց լրջախոհ նախարարը՝ Վարդան Օսկանեան, որ քաջածանօթ է սփիւռքի համապարփակ պատկերին, առ որ անկ է դիտել տուած կ'ըլլայ համաժողովին միակողմանի բնոյթը:

Ժողովի հայ մասնակիցներուն պարագային բացայայտ են հրէի ու հեթանոսի դատողութիւնները. արդարեւ, տարբեր երկիրներու քաղաքական կեանքէն ներս գործող կամ ընտրեալ պաշտօն ունեցող ներկայացուցիչներէն հրաւիրուած են այն անհատները, որոնք Դաշնակցութեան փարախին մէջ կամ շուրջը կը դեգերին, անտեսելով ուրիշները, առանց նկատի ունենալու անոնց կշիռը տուեալ երկրի քաղաքական կեանքին մէջ:

Այդ պատճառաւ ալ ժողովը աւելի հարցեր ստեղծած է, քան լուծած:

Այսպէս, առաջին զայրալից քննադատութիւնը լսուեցաւ Կիպրոսէն, որուն խորհրդարանին միակ հայ ներկայացուցիչն է Պետրոս Գալայճեան: Սկիզբէն փորձուած է ժողովը կայացնել Կիպրոսի մէջ եւ որովհետեւ Պրն. Գալայճեան հարկատու մը չէ Դաշնակցութեան, Կիպրոսի Հայ դատի Յանձնախումբին ատենապետը՝ Պրն. Անդրանիկ Աշճեան, շրջանցելով հայութեան պաշտօնական ներկայացուցիչը, դիմած է Կիպրոսի իշխանութեանց ձեռք ձգելու համար ժողովը կայացնելու արտօնութիւնը:

Կիպրոսի իշխանութիւնները, երկար անտեսումներէ ետք, կը մերժեն դիմումը առարկելով, որ Կիպրոսի միացման հարցով թրքական կողմին հետ փափուկ բանակցութեանց մէջ ըլլալով, չեն ուզեր հայկական նման համախմբում մը հիւրընկալել կղզիին վրայ: Տարբեր հարց, թէ գուցէ միեւնոյն պատասխանը ստացուէր Կիպրոսի իշխանութիւններէն նոյնիսկ եթէ հայ համայնքի պաշտօնական ներկայացուցիչին միջոցաւ կատարուած ըլլար դիմումը, սակայն, երեւակայեցէք խայտառակութիւնը, եթէ արտօնութիւն տրուէր համախմբումը կայացնել Կիպրոսի մէջ Դաշնակցութիւնը ոչ միայն մասնակից դարձուցած պիտի չըլլար Պրն. Գալայճեանը, այլ, անուղղակիօրէն անգօսնած պիտի ըլլար անոր պաշտօնական հանգամանքը՝ պարզապէս անոր համար, որ ենթական հարկատու մը չէ այդ կուսակցութեան:

Միւս դժգոհութիւնը լսուեցաւ Լիբանանէն, ուր հայութիւնը հինգ երեսփոխաններ ունի խորհրդարանին մէջ: Էր ժամանակ, երբ բոլոր երեսփոխաններն ալ կ'ըլլային դաշնակցականներ կամ անոնց ենթակայ անկուսակցականներ: Սակայն, վերջին ընտրութիւններուն դուրս մնաց Դաշնակցութիւնը խորհրդարանէն: Միայն Սեպուհ Յովնանեանն է, որ ընտրուեցաւ այդ կուսակցութենէն, իսկ միւս երեսփոխաններ կը պատկանին ՌԱԿ-ին, Հնչակեան կուսակցութեան կամ անկախ խմբաւորումի:

Սակայն «Պրօ-Արմենիայի» կազմակերպիչներուն համար հայութիւնը միայն մէկ երեսփոխան ունի Լիբանանի մէջ՝ Սեպուհ Յովնանեանը, որ հրաւիրուած է Փարիզ, անտեսելով միւս երեսփոխանները:

Լիբանանի խորհրդարանի անդամ եւ ՌԱԿ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Յակոբ Գասարճեան անգլիատառ «Դէյլի Սթար» օրաթերթին տուած մէկ հարցազրոյցին մէջ խստօրէն քննադատած է անջատողական այս գործելակերպը, զոր ինք բնորոշած է իբրեւ «ապարտէյտի քաղաքականութիւն», ապա ան աւելցուցած է «որքան ալ կարեւոր ըլլայ նպատակը՝ Հայկական Դատի ի նպաստ որեւէ նախաձեռնութիւն դատապարտուած է ձախողութեան, երբ կ'անտեսուին քաղաքական այլ կուսակցութիւնները»:★

Իր եզրափակիչ խօսքին մէջ ընկ. Գասարճեան չէ խնայած նաեւ Արամ Ա. Կաթողիկոսին, որ երբեք չի վարանիր այսպիսի միակողմանի նախաձեռնութիւններ հովանաւորելու: Մեղք որ, այլապէս, համաժողովին Արամ Կաթողիկոս փայլուն զեկոյց մը տուած է ֆրանսերէն լեզուով:

Այս բոլորը հաւանաբար կարելի է քննել ներքին կարգով, իբրեւ մեր տան կեղտոտ լաթերը եւ զիրար լուսաբանել:

Սակայն ինչ ըսել միջազգային քաղաքականութիւն խաղալու յաւակնող կազմակերպիչներուն, որոնք խակ ու անհեռատես որոշումով մը ամբողջ ժողովը կը շեղեցնեն իր հունէն: Արդարեւ, «Պրօ-Արմենիայի» կազմակերպիչները, ի սկզբանէ հրաւէր կը ղրկեն նաեւ իսրայէլացի պատմաբան Պրոֆ. Եայիր Օրոնին, սակայն վերջին պահուն կ'իմացնեն յարգելի գիտնականին, որ յետս կոչուած է իր հրաւէրը:

Այս անճարակ գործարքին վրայ, Հայ դատի ուրիշ նուիրեալ մը, Հայկական ցեղասպանութեան ֆրանսացի մասնագէտ Դոկտ. Իվ Թեռնոն, մէկդի թողնելով ժողովի օրակարգին վերաբերող իր զեկոյցը, խիստ ելոյթ մը կ'ունենայ այս արարքը որակելով «հակասեմական դրսեւորում» ու ժողովին կը կարդայ Պրոֆ. Օրոնի նամակը, ուր գիտնականը, հակառակ իր վիրաւորանքին, կը խոստանայ շարունակել իր պայքարը՝ յանուն Հայկական ցեղասպանութեան ճանաչման: (Նամակը տեսնել ստորեւ):

Այսօր Իսրայէլի պետութիւնը եւ հրէական շատ մը ազդեցիկ շրջանակներ, սիրաշահելով Թուրքիոյ հետ, ոչ միայն անտեսելու վրայ են Հայկական ցեղասպանութիւնը, այլ բուռն եւ ճակատային պայքար բացած են անոր ճանաչման դէմ: Պրոֆ. Օրոնի եւ Իսրայէլ Չառնիի նման հրեայ անկաշառ գիտնականներ իրենց հրատարակութիւններով եւ ելոյթներով կը հակադրուին թրքամէտ վերատեսութեան եւ մինչեւ անգամ իրենց պատկանած երկրին պաշտօնական քաղաքականութեան: Արդ, ինչպէս կարելի է վշտացնել նման անձնաւորութիւն մը, օտարացնել զայն հայ ազգին ու հայկական դատին:

Կամ այն էր, որ կանուխէն պէտք է խորհուէր ու չհրաւիրուէր Պրոֆ. Օրոնը, ինչպէս անտեսուած էին շատ մը քաղաքական դէմքեր, որոնք պէտք է մասնակից ըլլային նման հաւաքի մը, կամ ալ հրաւիրուելէ ետք, պէտք չէր հրաւէրը ջնջել:

Եթէ վերջին պահու մտահոգութիւնը կամ զգուշաւորութիւնը այն էր, որ իսրայէլացի պատմաբան մը հրաւիրելով կարելի էր թշնամիներ շահիլ կարգ մը արաբական պետութեանց մօտ, որոնք հայութեան լայն զանգուածներ կը հիւրընկալեն՝ պէտք է գիտակցիլ, արաբ կամ պաղեստինցի ղեկավարները իրենք կը գործակցին այն իսրայէլացի անհատ գործիչներուն հետ, որոնք համակիր են իրենց դատին կամ պաղեստինեան պետականութեան: Իբրեւ հասուն քաղաքական գործիչներ, անոնք պիտի հասկնային Պրոֆ. Օրոնի մասնակցութեան կշիռը:

Եթէ հայութեան եւ Հայկական դատին ի նպաստ դրական հանրային կարծիք ստեղծելն էր «Պրօ-Արմենիայի» նպատակը, օտար մամուլը առաւելաբար այդ հաւաքը բնութագրեց իբրեւ հակասեմական վերաբերումի արտայայտութիւն: Եւ այսօրուան աշխարհին մէջ դժուար չէ կշռել քաղաքական տարողութիւնը նման բնութագրումի մը:

Իցիւ թէ համապարփակ ընդգրկումով եւ քաղաքական ձեռնհասութեամբ կազմակերպուած ըլլար այս հաւաքը՝ հասնելու համար իր նպատակին, թէ՛ մեր ազգային ներքին մակարդակով եւ թէ՛ ալ իր միջազգային արձագանգներով:

Սակայն, այնպէս կը թուի, թէ կարգ մը մարդոց համար մենաշնորհ է ազգային դատը: Այնքան ատեն, որ շարունակուի այս նեղմիտ միակողմանիութիւնը, պիտի տեսնենք, որ միշտ անմահ պիտի մնայ Երուանդ Օտեանի Փանջունիին՝ որուն կարգախօսն էր՝ «Մենք ենք օրէնք, եւ մեզմէ դուրս ամէն ինչ ապօրէն է»...

Դետրոյթ, ԱՄՆ

★**«Ազգ»**-ի կողմից ավելացնենք, որ համաժողովին մասնակցության հրավեր չի ստացել նաեւ Կանադայի խորհրդարանի միակ հայ պատգամավոր Սարգիս Ասատուրյանը, որը վերջին տարիներին զգալի աշխատանք է կատարում Հայոց ցեղասպանության ճանաչման համար:

ԱՐՁԱԳԱՆՔ

Պրոֆ. Աուրոնի մեկնաբանությունը

Նույն «Պրո-Արմենիա» խորհրդաժողովի թեմային է անդրադառնում ճանաչված հրեա գիտնական Յաիր Աուրոնը «Հետեւողականության կարեւորությունը» հոդվածում, որն էլ. փոստով մեզ է ուղարկել Զորյան ինստիտուտը: Դրանում նա գրում է.

«Հունվարի 31-ին, երբ ես պատրաստվում էի ինքնաթիռ բարձրանալ Փարիզ ուղեւորվելու եւ «Պրո-Արմենիա» խորհրդաժողովին մասնակցելու (հրավերը ստացել էի անցյալ նոյեմբերին), հանկարծ կազմակերպիչները հեռախոսազանգով ինձ հաղորդեցին, որ չմեկնեմ: Պատճառաբանությունը, որ ներկայացրին ինձ, զայրացուցիչ էր: Ինձ հայտնեցին, որ Լիբանանից եւ մյուս արաբական երկրներից խորհրդաժողովին մասնակցող քաղաքացիներին իբր այդ երկրների կառավարությունները կարգադրել են իսրայելցիների ներկայությամբ որեւէ միջոցառման չմասնակցել:

Անմիջապես բողոքի նամակ ուղարկեցի, որն Իվ Թեռնոնը կարդաց խորհրդաժողովի առաջին նիստի ընթացքում՝ կազմակերպիչների համաձայնությամբ: Թեռնոնը նաեւ հոդված գրեց այդ առթիվ փարիզյան «Յառաջ» թերթի փետրվարի 6-ի համարում: Զորյան ինստիտուտը հայտարարություն հրապարակեց՝ քննադատելով երեւույթը եւ բացատրություն պահանջելով:

Կազմակերպիչները բացատրեցին, թե Միջին Արեւելքի անկայուն վիճակը եւ պատերազմի հավանականությունը հաշվի առնելով՝ խոհեմություն են համարել բացառել իսրայելցու ներկայությունը: Բարեբախտաբար, նրանք ընդունեցին իրենց պատճառաբանության թույլ լինելը եւ ափսոսանք հայտնեցին պատահածի համար: Խոստացան իմ զեկուցումը հրապարակել խորհրդաժողովի ինտերնետային սայթում եւ նույնիսկ կազմակերպել, որ Հայաստանում հանդես գամ դասախոսություններով:

Երախտապարտ եմ Իվ Թեռնոնին, Իսրայել Չառնիին եւ Զորյան ինստիտուտին՝ հարցին հրապարակային հնչեղություն տալու համար: Զգացված եմ նաեւ իմ գործընկերների եւ այլ գիտնականների զորակցական արտահայտություններից: Հասկանում եմ, որ ինձ հետ պատահածը սխալ դատողության հետեւանք է: Այնուամենայնիվ, խորը մտահոգություն պետք է հայտնեմ դրա հետեւանքների վերաբերյալ: Ես դրա հակազդեցությունն եմ տեսնում այլ ուղղություններով: Նամակներ եւ խմբագրականներ են գրվում հայերի եւ հրեաների կողմից, որտեղ նրանք դատապարտում են հակասեմական դրսեւորումները հայերի շրջանում, կարծես վերջիններս միաձույլ մի հավաքականություն լինեն եւ յուրաքանչյուր անդամ մեղավոր լինի դրանում: Իսրայելցիներին եւ հրեաներին պաշտպանելու իրենց փութաջանության մեջ նրանք աղաղակող ռասիզմ են քարոզում:

Բոլոր մարդիկ սխալական են: Եվ մենք դատապարտելով լուրջ սխալները, պետք է պատրաստ լինենք ներելու, երբ առկա է զղջումը:

Հակասեմիտիզմն ու ընդհանրապես ռասիզմը գոյություն ունեն ամբողջ աշխարհում, ամեն հասարակության մեջ: Ոչ մի ազգ, ժողովուրդ դրանից զուրկ չէ: Այդ երեւույթը կա ինչպես հայերի, այնպես էլ հրեաների մեջ: Բայց մենք պետք է հետեւողական լինենք: Չենք կարող դատապարտել ռասիզմը մի խմբավորման մեջ եւ թույլ տալ նույնի գոյությունը մի այլ խմբավորման մեջ:

Ես հաստատ կանգնած եմ Հայոց ցեղասպանությունը ժխտողների դեմ պայքարելու իմ վճռական դիրքում: Դա իմ պարտականությունն է որպես մարդ, որպես հրեա եւ որպես Հոլոքոստի հետեւանք ստեղծված պետության՝ Իսրայելի քաղաքացի:

Երբ մեկն ու մեկը ժխտում է Հայոց ցեղասպանությունը, ապա նա մթնոլորտ է ստեղծում, որտեղ հնարավոր է դառնում նաեւ ժխտել Հոլոքոստը: Յուրաքանչյուր ցեղասպանության ժխտումը ճշմարտության եւ մարդկային արժանապատվության վրա կատարված գրոհ է: Որպես մարդ, հրեա եւ իսրայելցի, ես պետք է հետեւողական լինեմ: Մենք բոլորս պարտավոր ենք հետեւողական լինել:

Միջազգային

Հակաիրաքյան պատերազմին Թուրքիայի մասնակցության հարցը Մեջլիսի այսօրվա օրակարգում

ԱՄՆ-ը թուրքերին առաջարկել է 15 մլրդ դոլար

Նախորդ համարում «Ազգն» անդրադարձել էր հակաիրաքյան պատերազմի շուրջ ծավալվող թուրք-ամերիկյան տարաձայնություններին, որոնց հիմքում ռազմական գործողություններին մասնակցության դիմաց առաջարկվող ֆինանսական օգնության հարցն է: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, թուրքական կողմը 26 մլրդ դոլար է պահանջում, 6 մլրդը անհատույց: Պաշտոնական Վաշինգտոնի հակազդեցությունն այս պահանջին վերոհիշյալ տարաձայնությունները փոխադրել են սակարկության ոլորտ: Այսպիսով, թուրք-ամերիկյան բանակցությունների հիմքում են հայտնվել փոխհատուցման չափերը:

Հիշեցման կարգով նշենք, որ ԱՄՆ-ի պաշտպանության փոխնախարար Պոլ Վոլֆովիցը մինչեւ փետրվարի 18-ը կողմնորոշվելու վերջնագիր էր ներկայացրել թուրքական իշխանություններին եւ սպառնացել. «Այլապես հակաիրաքյան պատերազմը կվարենք առանց հյուսիսային ռազմաճակատի: Այսպիսով, Թուրքիան կզրկվի հետպատերազմյան գործընթացներին մասնակցելու իրավունքից»: Դրան էր հետեւել Թուրքիայի 26 մլրդ դոլարի փոխհատուցում վճարելու նախագահ Ջորջ Բուշի բանավոր հավաստիացումը:

Հարկ է նշել, որ Աբդուլլահ Գյուլի կառավարությունը Վոլֆովիցի սպառնալիքներին տեղի չտվեց, իսկ Բուշի հավաստիացման պարագայում գրավոր երաշխիք պահանջեց: Թուրքական կառավարության համառության պատճառով թուրք-ամերիկյան տարաձայնությունները էլ ավելի սրվեցին: Ավելին, փետրվարի 19-ին ընդհատվեցին Իրաքի դեմ պատերազմին Թուրքիայի մասնակցության շուրջ ծավալվող երկկողմ բանակցությունները:

Թվում էր, թե թուրքերի համառության պայմաններում պաշտոնական Վաշինգտոնը Թուրքիայի նկատմամբ կորդեգրի ավելի կոշտ դիրքորոշում: Ինչպես երեւում է, հարցը սոսկ Թուրքիան չէ, այլեւ հակաիրաքյան պատերազմում երկրորդ ճակատի բացման անհրաժեշտությունը: Այլապես, փետրվարի 19-ին ընդհատված թուրք-ամերիկյան բանակցությունները փետրվարի 21-ին չէին վերսկսի: Ոչ էլ Վաշինգտոնը Թուրքիային որպես փոխհատուցում պատերազմին մասնակցության նոր պայմաններ կառաջարկեր:

Պայմանների առաջարկումը հիմք է տալիս ենթադրելու, որ բանակցությունները վերսկսելու նախաձեռնությունը պատկանում է ԱՄՆ-ին: Ըստ ամենայնի, դրանք հենց ամերիկացիների նախաձեռնությամբ էլ ընդհատվել էին: Ինչ վերաբերում է առաջարկվող պայմաններին, ապա թուրքական թերթերը փետրվարի 24-ի համարներում նշեցին, որ Իրաքի դեմ ռազմական գործողություններին մասնակցելու դիմաց ԱՄՆ-ը Թուրքիային հատկացնում է 5 մլրդ դոլար անհատույց ռազմական օգնություն եւ 10 մլրդ դոլարի վարկ: Այդ ընթացքում ամերիկյան զորքերը սկսում են տեղակայվել Թուրքիայի տարածքում, եւ մինչեւ մարտի 15-ը նրանք ավարտում են հարձակման անցնելու համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները: Ֆինանսական օգնությունից բացի, Թուրքիան անմիջականորեն մասնակից է դառնում հետպատերազմյան Իրաքի վերակառուցմանը, Հյուսիսային Իրաքում նա ակտիվ դերակատարություն է ստանձնում, եւ պահպանվում է տեղի թուրքմենների ներկայիս կարգավիճակը:

Քանի որ Թուրքիան 26 մլրդ դոլար էր պահանջել, իսկ ԱՄՆ-ը նրան 15 մլրդ է առաջարկում, ուրեմն Իրաքի դեմ ռազմական գործողություններին մասնակցելու գինը թուրքերի հետ սակարկել են նաեւ ամերիկացիները: Ըստ երեւույթին, սակարկության արդյունքները բավարարում են Թուրքիային, որ երեկ նախարարների խորհուրդը վարչապետ Գյուլի գլխավորությամբ քննարկեց ու վերջնական տեսքի բերեց եւ հաստատեց «Երկրի տարածքում ամերիկյան զորքերի տեղաբաշխման եւ հակաիրաքյան պատերազմին թուրքական զինված ուժերի մասնակցության» մասին կառավարական հրամանագիրը:

Հրամանագիրն այսօր կքննարկվի նաեւ Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի լիագումար նիստում:

Ասենք, որ Թուրքիայում իշխող իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը Մեջլիսում մեծամասնություն է կազմում: Հետեւաբար կառավարական հրամանագրի հաստատումը, անկախ կուսակցության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հայտարարությունից, թե պատգամավորներին չենք ուղղորդել, առանձնակի դժվարություն չէ: Ամերիկյան զինվորների հետ հյուսիսից Իրաք ներխուժելը՝ նմանապես: Սակայն դա առանձին խնդիր է, ինչպես հյուսիսային ռազմաճակատի բացումը, եւ մասնավոր մոտեցում է պահանջում: Համենայն դեպս, Անկարայում ԱՄՆ-ի դեսպան Ռոբերտ Փիրսոնը, որն առաջարկվող վերոհիշյալ պայմանները ներկայացրել էր թուրքական իշխանություններին, ընդգծել է, որ քաղաքական, տնտեսական եւ ռազմական խնդիրների շուրջ թուրքական իշխանությունների հետ ծավալվող բանակցությունները ավարտին են մոտենում: Ուրեմն, ավարտին պետք է մոտենան նաեւ Իրաքի դեմ սանձազերծվող պատերազմի նախապատրաստական աշխատանքները:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Իրաքի պատերազմը կտեւի 3 ամիս եւ կարժենա 150 մլրդ դոլար

Ամերիկյան CBS հեռուստաընկերության հաղորդումներից պարզ է դառնում, որ Իրաքի պատերազմի ծախսերը կազմելու են 150 մլրդ դոլար, չհաշված երկրի հետպատերազմյան վերականգնման ծախսերը: Մինչ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կքննարկի հակաիրաքյան նոր բանաձեւը, երեկ արդեն ի հայտ է եկել պատերազմի ծախսերի նախահաշիվը, որն ունի 3 գլխավոր հոդված:



Առաջինը բուն ռազմական ծախսերն են, որոնք կատարվելու են ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի բյուջեներից: Նկատի ունենալով, որ Պարսից ծոցի 1991 թ. պատերազմն արժեցավ 61 մլրդ դոլար, փորձագետներն առաջիկա պատերազմի ծախսերը գնահատում են 40-100 միլիարդ: Տարածաշրջանում արդեն տեղաբաշխված զորամիավորումների ուժերով եռամսյա ռազմական գործողություններն ամերիկացի հարկատուների վրա կնստեն 47 միլիարդ, չհաշված զինծառայողների ռոճիկները:

Թեեւ Պենտագոնն Իրաքին ահաբեկում է կայծակնային պատերազմի եւ խորտակիչ հարվածների հեռանկարով, այժմ արդեն խոսվում է ոչ թե երկշաբաթյա, այլ եռամսյա պատերազմի հավանականության մասին:

Ծախսերի 2-րդ հոդվածն իրաքցի գաղթականների տեղաբաշխումն է Իրաքի հարեւան երկրներում: ՄԱԿ-ի գաղթականների գործերի հանձնախմբի ներկայացուցիչը կիրակի օրն Ամմանում հայտարարեց, որ արդեն պատրաստ է ճամբարներ բացելու եւ գաղթականներին առնվազն 6 ամիս պահելու ՄԱԿ-ի ծրագիրը: Նրա խոսքերով, Հորդանանում, Թուրքիայում եւ Իրանում ստեղծվող ճամբարները մարտի վերջերին արդեն կկարողանան ընդունել առնվազն 300 հազար անձանց: Նկատի ունենալով, որ ԱՄՆ-ը մտադիր է Իրաքի վրա հարձակվել մարտի կեսերին, ՄԱԿ-ի հանձնախումբը թերեւս ստիպված լինի շատ արագ լուծել գաղթականների տեղաբաշխման խնդիրները եւ կատարել ավելի մեծ ծախսեր, քան նախահաշվային 154 միլիոնն է:

3-րդ հոդվածը կազմում են Իրաքի հետպատերազմյան վերականգնման ծախսերը, որոնց ստույգ չափը որոշելն անչափ դժվար է: Ամեն ինչ կախված է պատերազմի տեւողությունից, կիրառվելիք զինատեսակներից եւ այն բանից, թե իրաքցիները կհասցնե՞ն արդյոք հրկիզել իրենց գլխավոր նավթահանքերը, ինչպես արեցին 1991 թ.:

Ակնհայտ է, որ միջուկային փոքր լիցքերի կամ քիմիական զենքի օգտագործումը կմեծացնի երկրի վերականգնմանն ուղղվելիք ծախսերը: Խիստ մոտավոր հաշվարկների համաձայն, տվյալ հոդվածի ծախսերը կազմելու են 50-100 միլիարդ:

ԻՐԱՔՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Ֆրանսիան չի պաշտպանի ՄԱԿ-ի նոր բանաձեւը

Ֆրանսիան մտադիր չէ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում պաշտպանել Իրաքին առնչվող նոր բանաձեւը, որի ընդունումը նախատեսված է այս շաբաթ: Այդ մասին երեկ «Ֆիգարո» թերթին տված հարցազրույցում նշել է Ֆրանսիայի արտգործնախարար Դոմինիկ դը Վիլպենը: Նրա խոսքերով, նոր բանաձեւի ընդունումն անհրաժեշտություն չէ, քանի դեռ ՄԱԿ-ի տեսուչներն Իրաքում շարունակում են իրենց ստուգումները:

Միեւնույն ժամանակ Վիլպենն Իրաքի կառավարությանը կոչ է արել հնարավորին չափ շուտ սկսել միջազգային տեսուչների հայտնաբերած «Ալ Սամուդ-2» հրթիռների ոչնչացումը, ինչը պահանջում է ՄԱԿ-ի տեսուչների ղեկավար Հանս Բլիքսը:

Ավելի վաղ՝ կիրակի օրը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մեկ ուրիշ անդամ՝ Սիրիան եւս հանդես էր եկել ընդդեմ նոր բանաձեւի ընդունման, որի կողմնակիցներն են ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան: Անվտանգության խորհրդի մշտական անդամներից Ռուսաստանն ու Չինաստանը, Ֆրանսիայի պես, հանդես են գալիս տեսչական ստուգումների շարունակման օգտին:

Մինչդեռ ամերիկացիներն անսասան են Իրաքին հարվածելու իրենց մտադրության մեջ: Սաուդյան «Ալ Շարք ալ Աուսաթ» թերթին տված հարցազրույցում ԱՄՆ պաշտպանության նախարարի տեղակալ Ռիչարդ Փեռլը հայտարարել է, որ ԱՄՆ-ը Իրաքին կհարվածի, եթե նույնիսկ Ֆրանսիան վետո դնի ՄԱԿ-ի բանաձեւի վրա:

«Նույնիսկ եթե Ֆրանսիան Անվտանգության խորհրդում օգտագործի վետոյի իրավունքը, եւ միջազգային ընկերակցությունը չստանա նոր բանաձեւ, մենք դարձյալ պատերազմ կսկսենք, քանի որ ամերիկացի ոչ մի նախագահ թույլ չէր տա Ժակ Շիրակին որոշելու ԱՄՆ քաղաքականությունը», ընդգծել է Փեռլը:

Նա Սադդամ Հուսեյնի պաշտոնում առաջարկել է Իրաքյան ազգային կոնգրեսի ղեկավար Ահմեդ Չալաբիի թեկնածությունը, որը, Փեռլի խոսքերով, նախագահության «անկախ» թեկնածու է:

Բացվեց Չմիանալու շարժման 13-րդ համաժողովը

Մալայզիայի մայրաքաղաք Կուալա Լումպուրում երեկ բացվել է Չմիանալու շարժման մասնակից երկրների 13-րդ գագաթաժողովը: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ դրան մասնակցում են հինգ տասնյակ երկրների պետությունների ու կառավարությունների ղեկավարներ:

Օրակարգի գլխավոր հարցերն են Իրաքի եւ ԿԺԴՀ-ի ճգնաժամերը եւ միջազգային ահաբեկչությունը: 116 երկիր ընդգրկող Չմիանալու շարժման համաժողովի բացումից հետո Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահ Թաբո Մբեկին ներկայացրել է շարժման գործունեության ամփոփագիրը 1998 թ. Դուրբանում (ՀԱՀ) կայացած 1-ին գագաթաժողովից մինչեւ օրս: Ապա Մբեկին նախագահությունը փոխանցել է Մալայզիայի վարչապետ Մահաթիր Մոհամմադին:

Ապա ելույթ է ունեցել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը: Գագաթաժողովի մասնակիցներին ներկայացվել է բանաձեւի նախագիծ, որով դատապարտվում է ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի կողմից շրջանառության մեջ դրված «չարիքի առանցք» արտահայտությունը: Չմիանալու շարժման պետությունների ներկայացուցիչներն ընդգծել են, որ ամերիկացիներն ահաբեկչությունն իբրեւ փաստարկ են օգտագործում Իրաքի վրա հարձակում ձեռնարկելու համար:

Ընդունված առանձին հայտարարությամբ շարժման մասնակիցները դեմ են արտահայտվել հակաիրաքյան միակողմանի (առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թույլտվության) ռազմական գործողություններին:

Չմիանալու շարժումը, որին մասնակցում է ՄԱԿ-ի անդամ պետությունների կեսից ավելին, Իրաքին հորդորել է «ակտիվորեն» համակերպվել Անվտանգության խորհրդի թիվ 1441 բանաձեւի պահանջներին: Միաժամանակ համաժողովի մասնակիցները որոշել են շարունակել բանակցությունները ԿԺԴՀ միջուկային ծրագրի առաջադրած միջազգային ճգնաժամը հաղթահարելու նպատակով: Գագաթաժողովում մերժվել է Փենյանի այն առաջարկությունը, որը Վաշինգտոնին է մեղավոր համարում Կորեական թերակղզում ծագած լարվածության համար:

Համաժողովի աշխատանքները կավարտվեն այսօր:

Իրաքի քրդերն զգուշացնում են Թուրքիային

Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավար մարզի իշխանությունները նախազգուշացրել են, որ թուրքերի եւ քրդերի բախումներ կարող են լինել, եթե Թուրքիան Իրաքի պատերազմի ծագման դեպքում իրականացնի հազարավոր թուրք զինվորներ այդ շրջան ուղարկելու իր ծրագիրը:

Քրդական երկու գլխավոր կուսակցությունների առաջնորդները միահամուռ բողոք են արտահայտել զորքերի ուղարկման այդ ծրագրի կապակցությամբ: Նրանց կարծիքով, թուրքական զորքերի ներկայությունը միայն կապակայունացնի Հյուսիսային Իրաքի ինքնավար շրջանների իրադրությունը:

Քրդստանի ժողովրդավարական կուսակցության միջազգային հարաբերությունների պատասխանատու Հոշիար Զեբարին Ասոշիեյթեդ պրես գործակալության թղթակցին հայտարարել է. «Մենք դեմ կլինենք թուրքերի որեւէ զինված միջամտության: Եվ չարժե մտածել, թե մենք ձեւացնում ենք: Որեւէ պատրվակով արվող որեւէ միջամտություն կհանգեցնի բախումների»:

Քրդստանի հայրենասիրական միության մամլո քարտուղար Լաթիֆ Ռաշիդն իր հերթին ավելացրել է, որ «իրաքյան բոլոր կուսակցությունները սարսափի մատնվեցին, իմանալով Թուրքիայի դիտավորությունների մասին»:

ԱՄՆ-ին թուրքական տարածքի օգտագործում թույլ տալու դեպքում Թուրքիան մտադիր է Հյուսիսային Իրաք ուղարկել մի քանի հազար զինվոր, որպեսզի կանխի քրդական անկախ պետության ստեղծումը եւ նավթահանքերի նկատմամբ քրդերի վերահսկողության հաստատումը: Թուրքիայի իշխանությունները վախենում են, որ քրդական պետության կազմավորումը կուժեղացնի քրդերի անջատական տրամադրությունները Թուրքիայում: Բացի դրանից, ռազմական միջամտության շնորհիվ Թուրքիան ակնկալում է մասնակից դառնալ Իրաքի հետպատերազմյան վերաձեւումներին:

Պ. Ռ.

Ադրբեջանական հեռուստահաղորդումներ Եվրոպայում

Ադրբեջանի հաղորդակցությունների նախարարությունն ու պետհեռարձակման ընկերությունը հայտարարել են, որ AzTV-1 հեռուստակայանի հաղորդումներն այսուհետեւ 90 սմ-ոց արբանյակային կապի միջոցով հեռասփռվելու են նաեւ եվրոպական բոլոր երկրներում, տեղեկացնում է էլ. փոստով տարածված հաղորդագրությունը, ավելացնելով, որ Թուրքիայում, Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում արդեն դիտում են այդ հեռարձակումները:

Մշակույթ

Նավի փրկության համար

2003 թ. Գրիգոր Նարեկացու տարին է

2003 թ. հայոց մեջ նշվում է մարդկության մտածողության մեծագույն հայտնագործություններից մեկի` Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» գործի գոյության 1000-ամյակը: Սոսկ հայերիս կարծիքը չէ, որ «Մատյանը» հզոր երեւույթ է: Աշխարհի գիտական այրերը բարձր են գնահատել Նարեկացու գործը: Հազարավոր կարծիքներից մեջբերենք սոսկ մեկը` ֆրանսիացի բանասեր Լյուկ-Անդրի Մարսելի խոսքը. «...Թեպետ Նարեկացին հաճախ ազդարարում է մահը, բայց սխալ կլիներ նրան համարել ոչնչի երգիչ, որովհետեւ նա մահն անպատճառ է համարել մարդուն, որովհետեւ ոչ ոք նրա չափ չի պահանջել ապրելու իրավունքը»:

Մենք «Մատյան ողբերգությունը» չենք կարդում որպես սոսկ գիրք, որպես սոսկ քնարական կամ միստիկ պոեմ: Մենք «Նարեկով» բժշկում ենք մեր հիվանդներին եւ փորձում ենք հասկանալ մեր հիվանդություններն ու խոտորումները` բժշկվելու համար: Մեր մեղքերն ու ավերակումները խոստովանելով Աստծուն` ինչպես հազար տարի առաջ, այսօր էլ մենք պետք ունենք կրկնելու Գրիգոր Նարեկացու խոսքը. **«Թող շնորհիվ քո պատվական արյան, /Որ մատուցվում է միշտ ի հաճություն առաքինիդ կամքին, /Դատապարտյալիս պատիժներն համակ ջնջված վերանան, /Պարտքերը զիջվեն, ամոթը ցրվի, /Անարգանքները տրվեն մոռացման, /Դատավճիռը փոխվի ի բարին, /Որդերը սատկեն, լացը վերանա, /Ատամնակրճտումն խոտան դադարի, /Ողբերն սպառվեն, արցունքներն հատնեն, /Սուգը փարատվի, խավարն հալածվի, /Մարի, խափանվի հուրն այս սաստկաբոց, /Եվ բնաջնջվեն տանջարանները զանազանակերպ...»...**

Այս տողերը գրվել են 1003 թվականի՞ն, թե` այսօր, վաղը... ժամանակի չափումներից դուրս են Գրիգոր Նարեկացու խոսքերը, ինչպես մարդկային մտածողության մի քանի տասնյակ իրողություններ:

Ամեն ինչում մանրակրկիտ ստույգություններ փնտրողները հազար տարի փորձում են Նարեկա վանքի մեծագույն ճգնավորի կենսագրությունը ճշգրտել: Ինչո՞ւ, ինչի՞ համար: Ժամանակին այս մոլորությունն ունենալով, այսօր ես այլեւս ազատվել եմ այդ շղթաներից: Բարձր գնահատելով Գրիգոր Նարեկացու խոսքի հանճարեղությունը (Միսաք Մեծարենցը կասեր «Գիտեր ծովաձայն հնչեցնել բառերը»), պիտի փորձենք խորանալ ասածի իմաստի մեջ: Ու, որպեսզի ճիշտ հասկանամ «Մատյանի» ողջ մեծությունը, կրկին ու կրկին կարդում եմ Նարեկացու տաղերը, խորհուրդները, աղոթքները, որոնք նախախոսքը եղան «Մատյանի»: Առավել հետաքրքրական են աղոթքները:

Ասել է. «Աղօթքն առաւել հարազատ եւ մերձաւոր է Աստծուն, քան ամէն մի առաքինութիւն, քանզի բոլոր միւսները որպէս հանդերձանք եւ պատրաստութիւն են Աստուծոյ մօտ մուտք գործելու համար, իսկ սա դէմյանդիման խօսակցութիւն է Աստուծոյ հետ... Քանզի այսպէս է պատշաճ նախ տրուած բարիքների համար գոհանալ եւ ապա առաջիկայի համար խնդրել: Եւ ոչ միայն անձի եւ տան, որդու եւ ընտանիքի համար անել այս, այլեւ ամբողջ աշխարհի, (որպէսզի) Նա տնօրինի իւրաքանչիւրի հոգու եւ մարմնի կարիքները եւ օգուտները»:

Ինչպես վայել է հանճարեղ մտածողին` Գրիգոր Նարեկացին մարդու փրկության ամենահարկավոր պայմանը համարել է մեր մեջ նստած դեւին ճանաչելը, չարությունը գիտակցելը եւ դրանից ազատվելու մեր գործած ճիգը: «Մատյանի» խտացված տողերի բացատրությունը կարելի է տեսնել դեռ մինչ «Մատյանը» գրված աղոթքներում: Ամեն դեպքում այսպես կարելի է մեկնաբանել «Աղօթք ընդդիմամարտ դիւաց եւ դիւասարսուռ ջերմնատագնապ ախտութեանց Աստուծով փարատիչ`



սրբոյ Գրիգորի Նարեկացոյ ասացեալ»: Դիմելով Հորը ամենաստեղծ եւ նրան անվանելով «անուն ահաւոր, ձայն սարսափելի, կոչում ընտանի, խօսք համբուրելի, ազդում սքանչելի, հրաման սոսկալի, էութիւն անքննելի, գոյութիւն անճառելի...» (այս փոքրիկ մեջբերումը համեմատենք «Մատյանի» հետ), Նարեկացին աղոթում է, խնդրում մեր Տիրոջը մարդուն փրկել դիվական տագնապներից ու տենդերից. **«...Քեզանով եւ Քո անպարագիր զօրութեամբ սաստիր տագնապող եւ դիւական ջերմութեան այս տենդը, որ մեղքերի հետ սպրդելով` ներմուծուեց, որպէսզի փախչի այս մարդուց` զարհուրելով երկնաւոր Գառիդ սխրալի եւ անբաւելի Արեան վտակից, որով մի անգամ միայն ցողուելով` լիովին մաքրուեցինք յաւիտենապէս: Եւ արդ, այս արարչակերտ խորհրդի պատկառելի խոնարհութիւնից թող ամաչի սատանան իր չար հրեշտակների գործերի համար, տանջուի եւ հալածուի` հեռացուելով եւ արտաքսուելով Քո բնակութեան խորանի շինութիւնից դէպի արտաքին խաւարը...»:**

Մեծն ճգնավորն աղոթում է, որ կործանվի Բելիարի անբարո բարքերի ապստամբությունը` ամբողջովին կորստյան մատնվելով: Նկատում է նաեւ Նարեկացին, որ անմահ իսկությունը, թաղվելով, ծածկվել է երկրի որովայնում, սրանով գոռոզի վերամբարձ հպարտությունը պիտի մահվան դժոխքի մթաստվեր հատակը սեւեռուն դիտի:

Դժվար ասված խոսքեր են սրանք, ծանր ապրումներից, տագնապներից ու տենդահար թափահարումներից, հոգեկան ալեկոծումներից ծնված աղոթք, որ հոգու փրկության ճիչ է, հոգու վերակենդանացման ծնրադիր ցանկություն, մեծագույն հառաչանք:

Ասված է եղել, չէ՞ որ չարը պետք է մեր մեջ բնակություն հաստատելու փորձեր անի, որ մեզ պիտի մղի անվերջ ավերումների, փլուզումների, խորտակումների: Այս ամենը հիանալի գիտեր Գրիգոր Նարեկացին, որ դեւերից պաշտպանվելու համար իր աղոթքում նշել էր դրանց ահավորությունը.

«Արդ, խաչի Քո նշանի դրոշմից, որն, աստուածային արեամբդ ներկելով, Դու նորոգեցիր, նոյն որդեգրութեան շնորհով մեզ մկրտեցիր եւ Քո փառքի պատկերով նկարելով յօրինեցիր, այս աստուածային պարգեւներով թող ամօթահար լինի սատանան, քակտուեն մեքենայութիւնները, վերանան որոգայթները, պարտուեն մարտնչողները, կորչեն սայրասուր զէնքերը, ցնդի մշուշը, փարատուի խաւարը, պարզուի մառախուղը...»: Աստծո արարչագործությամբ ստեղծված, բնական, բնականոն երթի, առաջընթացի երկրպագուն լինելով, մարդու ամեն մի խոտորումը Նարեկացին համարում էր աստվածանարգություն: Սա` առաջին:

Եվ երկրորդը: Գրիգոր Նարեկացին ամեն ինչի սկիզբն ու վերջը համարում է սերը, քանզի անգամ մարդու բազում մեղքերը թվարկելով, չի կործանում նրան, այլ մեղքերից ազատվելու, դեւերի որոգայթներից, չարի թելադրանքներից փրկելու հույսը պահում է. **«Թող որ ամենքին կյանք կամեցողիդ /Ու պարգեւողիդ գթությունը գա, /Լույսդ ճառագի, փրկությունդ փութա, /Օգնությունդ հասնի, այցդ ժամանի, /Ողորմությանդ ցողն շտապելով` /Ոռոգի պապակ անդաստաններն այս...»:**

Դեւի դրդմամբ մարդն անդադար ընկնում է որոգայթների մեջ: Ու խաբկանքների մեջ ընկած իր հոգու (մարդու) համար իրեն նավապետ կարգելով, փորձում է փրկել նավը, փորձում է նախ եւ առաջ` իր «Մատյանով», ապա նաեւ իր տաղերով, քարոզներով, մեկնություններով, աղոթքներով:

Գիտեմ, որ մենք հիմա անհանգիստ ենք, տագնապով լցված, տենդահար, որ մեր հոգու խաղաղությունը խռովվել է: Բայց նաեւ գիտեմ, որ աշխարհիկ մեր ալեկոծումները կհանդարտվեն, եւ մենք բնականոն ու բնական կանցնենք մեր ճանապարհը: Ու այդ ճանապարհին մեզ միշտ խորհրդատու կլինի մեծն Նարեկացին, մեզ «Նարեկը» կբժշկի, ինչպես եղել է ու կլինի:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Ճշմարտությունը հայոց կոտորածների մասին

Հայոց ցեղասպանության կազմակերպման գործում, ինչպես հայտնի է, հանցակցության մեծ բաժին ուներ նաեւ կայսերական Գերմանիան: Թուրքիայում հայերի նկատմամբ կիրառվող անմարդկային բռնությունների հասարակությանը իրազեկ չդարձնելու նպատակով Գերմանիայի կառավարությունը խստագույնս արգելում էր մամուլում դրանց նույնիսկ աննշան հրապարակումը: Այդուհանդերձ, Գերմանիայի մտավորականները, հավատարիմ ճշմարտության ձայնին, քննադատում էին իրենց կառավարությանը` հրապարակելով փաստաթղթերի ժողովածուներ, հուշեր, տեղեկություններ, որոնք արտացոլում էին հայերի բնաջնջման իրական պատկերը: Նրանք համոզիչ փաստաթղթերով ապացուցեցին օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների ծրագրված ու կազմակերպված լինելը: Դրա վառ վկայությունն է գերմանացի միսիոներ Էռնստ Զոմմերի «Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին» հատորյակը, որի հայերեն թարգմանությունը (թարգ. Էվելինա Մակարյան) վերջերս ընթերցասեր հասարակայնությանը ներկայացրեց ԵՊՀ հայագիտական կենտրոնը:

«Ծածուկ բան չկա, որ չհայտնվի, եւ մի թաքուն բան չեղավ, որ դեպի հայտնություն չգա», Մատթեոսի ավետարանի այս խոսքերով է սկսվում Զոմմերի գիրքը: Հեղինակն իր պարտքն է համարում մարդկանց իրազեկ դարձնել զարհուրելի իրադարձությունների ճշմարիտ պատմությանը ականատեսների անսուտ վկայություններով, որոնց հավաստիությանը պատասխանատու է: «Գերմանացի ժողովուրդն իրավունք ունի իմանալու ողջ ճշմարտությունն այն իրողության, որը ոչ միայն արտերկրում մեծ վնաս հասցրեց մեր բարի անվանը, այլեւ մեղսակից դարձրեց մեզ, որի պատճառով համաշխարհային պատերազմի երկրորդ կեսին չարժանացանք Աստծո ողորմությանը», գրում է Զոմմերը: Հայոց ցեղասպանության եղերական իրադարձությունները գրքում նկարագրված են ինչպես սկսվեց փոթորիկը, հայ ժողովուրդը զրկվում է առաջնորդներից եւ զենքից, աքսորներ, ինչ վերապրեցին աքսորի ժամանակաշրջանում Արեւելքում քրիստոնեական բարեգործական գերմանական օգնության միսիոներությունները եւ լուսանկարներ մռայլ ֆոնի վրա բաժիններում` ներկայացնելով, ինչպես հեղինակն է նշում, դրանց ընդամենը մի փոքրիկ հատվածը:

Կովկասյան բանակի թիկունքում, Մուշի գերմանական օգնության միությունում ծառայող քույր Ալմա Յոհանսոնը պատերազմի հենց սկզբից ականատես է եղել, թե ինչպես են թուրքերը մտնելով ցանկացած տուն, թալանել ու կողոպտել հայերին, որպես բեռնակիրներ օգտագործել ոչ միայն տղամարդկանց, այլ կանանց ու նույնիսկ երեխաներին ու ծերերին: Թուրքերի բռնարարքներից իրենց կանանց պաշտպանելու համար զենք վերցրած հայ տղամարդկանց պատժել են` հրկիզելով նրանց գյուղերը: «Սրբազան պատերազմ» հայտարարելուց հետո, 1914 թ. նոյեմբերին թուրք պետական պաշտոնյաները խոստովանել են, որ հայերին ջարդելու համար սպասել են միայն հրաման: Թուրքերը կանխատեսել են, որ ռուսական բանակը մինչեւ Մուշ կհասնի, իսկ մինչ այդ իրենք կջարդեն հայերին: «Ամեն ինչ հրահանգավորված էր վերեւից` կանխամտածված եւ կազմակերպված, ճենց սատանայությամբ»:

Նախ` հայ ժողովրդին մեկուսացրին իր առաջնորդներից` հոգեւորականներից, ուսուցիչներից, հարուստներից ու մտավորականներից, որոնց ձերբակալեցին ու բանտ նետեցին, որովհետեւ գլխատված ժողովրդին հեշտ է ոչնչացնել: Այս մասին պատմում է Մամուրեթ-ուլ-Ազիզի որբանոցի գերմանացի քույրերից մեկը` Քլարա Պֆայֆերը: Նրա վկայությամբ, 1915 թ. սկզբից լուրեր տարածվեցին Վանի գավառի բնակչության հեղափոխական շարժման մասին, որից անմիջապես հետո սկսվեց հայ զինվորների զինաթափումը, որի նպատակը հայերին ինքնապաշտպանությունից լիովին զրկելն էր: Սկսվեց հայերի սպանդը ֆիզիկական խոշտանգումներով:

«Ըստ 1918 թվականի նոյեմբերի 12-ի գերմանական թղթակցության, Թուրքիայից տեղահանվել է մոտ 1 միլիոն 400 հազար հայ բնակիչ: Եվ այնտեղ անմարդկային եղանակներով իրականացվեց այդ ծրագիրը, որի ընթացքում խլվեց ավելի քան մեկ միլիոն մարդկային կյանք», գրում է Զոմմերը: Ուշագրավ են շվեդ միսիոներուհի քույր Թորա ֆոն Վեդել-Յարլսբերգի եւ գերմանուհի քույր Էվա Էլվերսի պատմածները (ականատեսների վկայությամբ) իրար կապած 3000 հայերի Կամախի կիրճի մերձակա հովտում մի բարձր ժայռից եփրատի ալիքների մեջ նետելու, Սվազի ողջ բնակչությանը տեղահանելու ու սպանելու եւ այլ սահմռկեցուցիչ դեպքերի մասին: «Ռուսական սահմանից մինչեւ Սվազ եւ այնուհետեւ արեւմուտք ընկած տարածքները գրեթե «մաքրված էին» հայերից: Թուրքիան ոչնչացնելով իր բնակչության լավագույն մասը` կործանում էր նաեւ ինքն իրեն», հաղորդում են նրանք:

Զոմմերը ընդգծում է այն հանգամանքը, որ թուրքական կառավարությունը, չկարողանալով այլեւս գաղտնի պահել զանգվածային տեղահանման փաստը, փորձում էր արդարանալ` մեղադրելով հայերին ըմբոստության մեջ: Մինչդեռ նման մեղադրանքով անգամ չի կարելի արդարացնել այն ահավոր բռնությունները, որ կիրառվեցին կանանց, երեխաների ու ծերերի նկատմամբ: «Հայերն այնքան հեռու էին ըմբոստությունից, որ մեծ մասամբ առանց դիմադրության կոտորվեցին», գրում է նա: Մուշում գթության քույրերից Ալմա Յոհանսոնը պատմում է Մշո գավառի հայ բնակչության կոտորածի մասին:

Պատերազմն ու աքսորը Վանում եւ Մուշում կասեցնում են միսիոներական աշխատանքը: Միսիոներներին հաջողվում է փրկել Մազերեհի, Մարաշի եւ Յարունիեի իրենց հաստատություններում գտնվող երեխաներին ու աշխատողներին: «Համաշխարհային պատերազմը սոսկալի տառապանքներ պատճառեց աշխարհին եւ, իհարկե, ամենաշատը բաժին հասավ հայերին: Վայ նրանց, ովքեր անարդար են գործել: Եթե նրանց չդատեն մարդկանց օրենքներով, միեւնույն է, նրանք Աստծո դատաստանից չեն կարող խուսափել» գրքի վերջում ասում է գերմանացի միսիոները:

Արդի քաղաքակիրթ աշխարհում Թուրքիան հակահայկական իր քարոզչությամբ շարունակում է կեղծ փաստարկներով խեղաթյուրել պատմական ճշմարտությունը: Դրա դեմ ամենազորավոր միջոցը Էռնստ Զոմմերի գրքի եւ նմանատիպ աշխատությունների լույս ընծայումն ու տարածումն է, քանզի դրանցում ուժգին է հնչում ճշմարտության ձայնը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայաստանը կմասնակցի Բեռլինում կայանալիք զբոսաշրջիկությանը նվիրված խոշոր ցուցահանդեսին

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մարտի 7-11 Բեռլինում կանցկացվի միջազգային տուրիստական ITB ցուցահանդեսը (International Tourism Bours), որին Հայաստանը կմասնակցի արդեն երկրորդ անգամ:

Ինչպես հայտնեց «Հայաստան-տեղեկատվություն» կենտրոնի հասարակության հետ կապերի համակարգող Մարիա Պետրոսյանը, ամեն տարի ցուցահանդեսին մասնակցում են նաեւ մոտ մեկ տասնյակ տուրօպերատորներ: Այս անգամ Բեռլինում Հայաստանի զբոսաշրջության զարգացման գործակալության հովանու ներքո կներկայացվեն «Թուֆենկյան հյուրասիրություն», «Սաբերա տուր», «Armenia T+ M», «Tatian's travel», «Arminius travel» վեց կազմակերպությունները եւ կլինի նաեւ Երեւանի թանգարանների մասին տեղեկատվություն:

Ցուցահանդեսին մասնակցելու նպատակը Հայաստանը միջազգային զբոսաշրջության շուկայում պատշաճ ներկայացնելն է եւ մեր ստեղծած բարձր վարկանիշը պահպանելը, ասաց Մ.Պետրոսյանը:

Երեկ «Հայաստան-տեղեկատվություն» կենտրոն էին հրավիրվել մեկ տասնյակ թանգարանների ներկայացուցիչներ, որոնց հետ քննարկվեցին համագործակցությանը եւ զբոսաշրջությանը վերաբերող մի շարք հարցեր, այդ թվում նաեւ ITB-ում իրենց տեղեկատվական ցուցապաստառը զետեղելու մասին:

ԾԱՂՐԱՆԿԱՐՉԻ ԱՉՔԵՐՈՎ



Խաղը մնաց անավարտ

Իտալիայի առաջնության 22-րդ տուրը սկսվեց Թուրինի «Դելի Ալպի» մարզադաշտում «Թորինոյի» եւ «Միլանի» հանդիպման ժամանակ տեղի ունեցած տխուր միջադեպով։ Հանդիպման 64-րդ րոպեին մրցավարը ստիպված էր դադարեցնել խաղը, քանի որ տրիբունաներում դաշտի տերերի երկրպագուները վշտացած սիրելի թիմի անհաջողությունից, անկարգություններ էին հրահրել՝ կոտրելով նստարանները։ Ոստիկանությունը ստիպված էր արցունքաբեր գազ օգտագործել, որն ավելի շիկացրեց մթնոլորտն ու խառնաշփոթ առաջացրեց։ Այդ պահին «Միլանը» հաղթում էր 3-0 հաշվով։ Արդեն 2-րդ րոպեին Ինձագին բացեց հաշիվը, իսկ մինչեւ ընդմիջում Զեեդորֆը 2 անգամ գրավեց մրցակցի դարպասը։ Ամենայն հավանականությամբ «Միլանին» հաղթանակ կշնորհվի 3-0 հաշվով։

Աղյուսակը գլխավորող «Յուվենտուսն» ու «Ինտերը» հերթական հաղթանակները տոնեցին միեւնույն 3-1 հաշվով։ «Ինտերը» սեփական հարկի տակ պարտության մատնեց «Պյաչենցային»։ Ընդ որում հաշիվը բացվեց միայն 64-րդ րոպեին։ Աչքի ընկավ Բատիստուտան՝ բացելով իր գոլերի հաշիվն «Ինտերում»։ Մինչ հյուրերը կհասկանային, թե ինչ կատարվեց, «Ինտերն» արագ գրոհ կազմակերպեց եւ Վիերին կրկնապատկեց հաշիվը։ Մեկ րոպե անց Վիերին կրկին աչքի ընկավ՝ խփելով առաջնությունում իր 21-րդ գոլը։


AP-PHOTOLURE

Իսկ ահա, «Յուվենտուսը» «Կոմոյի» հետ արտագնա խաղի արդեն առաջին խաղակեսում 3 անգամ հասավ հաջողության։ Մյուս խաղերի արդյունքներն են. «Պերուջա»-«Պարմա»՝ 1-2, «Ուդինեզե»-«Ռոմա»՝ 2-1, «Բոլոնիա»-«Էմպոլի»՝ 2-0, «Մոդենա»-«Կիեւո»՝ 1-0, «Բրեշիա»-«Ռեջինա»՝ 2-1, «Լացիո»-«Ատալանտա»՝ 0-0։ Առաջատար հնգյակի ցուցանիշներն այսպիսին են՝ «Յուվենտուս», «Ինտեր»՝ 48-ական միավոր, «Միլան»՝ 43 (առանց «Թորինոյի» հետ խաղի), «Լացիո»՝ 40, «Կիեւո»՝ 37։

«Օլիմպիկը» շարունակում է հաղթարշավը

Ֆրանսիայի առաջնության 28-րդ տուրում Մարսելի «Օլիմպիկը» սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց «Լիլին» եւ շարունակում է գլխավորել աղյուսակը (51 միավոր)։ Առաջատարին 2 միավորով զիջում է «Մոնակոն», որը սեփական դաշտում պարտության մատնեց «Օսերին» (3-1)։ Այդ խաղում մեկական անգամ աչքի ընկան Նոնդան («Մոնակո») եւ Սիսեն («Օսեր»)՝ խփելով առաջնությունում իրենց 14-րդ եւ 11-րդ գոլերը։ Իսկ ռմբարկուների ցուցակը 15 գնդակով գլխավորում է Պաուլետան («Բորդո»)։ Չնայած վերջինս այս տուրում գոլ չխփեց, սակայն «Բորդոն» հյուրընկալվելիս հաղթեց «Սեդանին» շնորհիվ Ֆեյնդունոյի միակ գոլի։

3-րդ տեղում ընթացող «Լիոնը» (45 միավոր) սեփական հարկի տակ հաղթեց «Ռենին» (4-1)։ Ճգնաժամում գտնվող «Պարի Սեն Ժերմենը» հյուրընկալվելիս զիջեց «Գենգամին» (2-3), չնայած խաղի ընթացքում հաղթում էր 2-0 հաշվով։ Խաղի հերոսը «Գենգամի» հարձակվող Դրոգբան էր, որը խփեց 2 գոլ, ընդ որում, հաղթական գնդակն անցկացրեց վերջին րոպեին։ Տուրի մյուս հանդիպումների արդյունքներն են. «Նանտ »-«Այաչո»՝ 1-0, «Լանս»-«Մոնպելյե»՝ 4-0, «Տրուա»-«Ստրասբուրգ»՝ 1-0, «Բաստիա»-«Նիցա»՝ 1-1, «Սոշո»-«Հավր»՝ 1-0։

Սուլշերը թիմին փրկեց պարտությունից

Անգլիայի պրեմիեր-լիգայի առաջատար «Արսենալը» 28-րդ տուրում հյուրընկալվելիս ջախջախիչ պարտության մատնելով «Մանչեսթր սիթիին» (5-1), ավելի ամրապնդեց իր դիրքերը։ Գոլերից մեկն իր օգտին գրանցեց Տյերի Անրին, որը 19 գնդակով գլխավորում է ռմբարկուների ցուցակը։ «Արսենալը» վաստակել է 60 միավոր՝ 5-ով գերազանցելով «Մանչեսթր յունայթեդին», որը «Բոլտոնի» հետ խաղում միայն խաղի վերջին րոպեին խույս տվեց պարտությունից։ Հյուրերի կազմում վնասվածքի հետեւանքով բացակայում էին Սիլվեստրն ու Սկոուլզը, որոնց փոխարինել էին Օ'Շին եւ Սուլշերը։ Հենց վերջինս էլ խաղավերջում թիմին փրկեց պարտությունից։ 3-րդ տեղում ընթացող «Նյուքասլը» (52 միավոր) հյուրընկալվելիս 3 անպատասխան գնդակ խփեց «Լիդսի» դարպասը։ 3-րդ գոլն իր օգտին գրանցեց Շիրերը՝ խփելով առաջնությունում 15-րդ գնդակը։ «Էվերտոնի» հետ խաղում «Սաութհեմփթոնի» հարձակվող Բիտին բացեց հաշիվը՝ խփելով 17-րդ գոլը։ Սակայն դա բավական չէր հաջողության հասնելու համար։ Ռածինսկու խփած 2 գոլերը հաղթանակ պարգեւեցին «Էվերտոնին»։

Տուրի մյուս խաղերում գրանցվել են հետեւյալ արդյունքները. «Չելսի»-«Բլեքբյոռն»՝ 1-2, «Սանդերլենդ»-«Միդլսբրո»՝ 1-3, «Չարլտոն»-«Աստոն Վիլա»՝ 3-0, «Բիրմինգհեմ»-«Լիվերպուլ»՝ 2-1, «Վեստ Բրոմվիչ»-«Վեստ Հեմ»՝ 1-2։

Առաջատարների դիրքերն անսասան են

Իսպանիայի առաջնության 23-րդ տուրի մեկնարկային խաղում 3-1 հաշվով հաղթելով «Վալյադոլիդին», Մադրիդի «Ռեալն» ընդամենը մեկ օրով գլխավորեց աղյուսակը։ Հաջորդ օրը «Ռեալ Սոսյեդադը» սեփական հարկի տակ պարտության մատնելով «Օսասունային» (2-0), կրկին ստանձնեց առաջատարի դերը։ Նրանց միջեւ միավորների տարբերությունը երկուս է։ «Ռեալի» հետ նույնքան միավոր (45-ական) է վաստակել երկրի չեմպիոն «Վալենսիան», որը հյուրընկալվելիս ջախջախեց նախավերջին տեղում ընթացող «Ռայո Վալյեկանոյին» (4-0)։ Տուրի ամենախոշոր հաշիվը գրանցվեց «Դեպորտիվո»-«Ալավես» խաղում (6-0)։ Արդյունավետությամբ աչքի ընկավ Տրիստանը՝ դառնալով «հեթ-տրիկի» հեղինակ։ 2 գոլ իր օգտին գրանցեց առաջնության լավագույն ռմբարկու Մակայը՝ գնդակների թիվը հասցնելով 18-ի։ Առաջնության հետնապահ «Ռեկրեատիվոն» սեփական հարկի տակ 3-0 հաշվով հաղթեց «Ատլետիկոյին»։ «Բարսելոնը» չորս անպատասխան գնդակ խփեց «Բետիսի» դարպասը, ընդ որում, 3 գոլի հեղինակ դարձավ Սավիոլան։ Մյուս խաղերի արդյունքներն են. «Մալագա»-«Սելտա»՝ 1-1, «Մալյորկա»-«Ատլետիկ»՝ 1-1, «Վիլյառեալ»-Ռասինգ»՝ 0-3, «Սեւիլիա»-«Էսպանյոլ»՝ 1-0։

«Բավարիայի» վստահ երթը

Մյունխենի «Բավարիան» շարունակում է վստահ ելույթները բունդեսլիգայում։ 22-րդ տուրում առաջատարը 2-0 հաշվով հաղթեց «Նյուրնբերգին» եւ միավորների տարբերությունը «Բորուսիայից» հասցրեց 10-ի։ «Բավարիան» արդեն 11 խաղ պարտություն չի կրել։ Իսկ ահա, Դորտմունդի «Բորուսիան» չափազանց դժվար մրցապայքարում արտագնա խաղում կարողացավ խույս տալ պարտությունից։ «Շալկե-04»-ի հետ խաղի 16-րդ րոպեին «Բորուսիան» զիջում էր 0-2 հաշվով։ Եվ միայն 2-րդ խաղակեսի սկզբնամասում հյուրերին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը։ «Շտուտգարտը» սեփական հարկի տակ 4-0 հաշվով ջախջախեց Մենխենգլադբախի «Բորուսիային» եւ այժմ միայն մեկ միավորով է զիջում Դորտմունդի թիմին։ Տուրի մյուս հանդիպումներում գրանցվել են հետեւյալ արդյունքները. «Հաննովեր»-«Բայեր»՝ 1-2, «Հանզա»-«Բոխում»՝ 1-1, «Վերդեր»-«Էներգի»՝ 0-1, «Կայզերսլաուտերն»-«Համբուրգ»՝ 2-0, «Վոլֆսբուրգ»-«Մյունխեն-1860»՝ 1-1, «Հերտա»-«Արմինիա»՝ 0-0։ Ռմբարկուների ցուցակը 14 գնդակով գլխավորում է Այլտոնը։

ԱՐՁԱԳԱՆՔ

Ֆերգյուսոնի արարքն ակումբին թանկ արժեցավ

Բեքհեմի վրա Ալեքս Ֆերգյուսոնի նետած խաղակոշիկը, որի հետեւանքով վնասվել էր ֆուտբոլիստի հոնքը, շատ թանկ նստեց ակումբի վրա։ Ֆոնդային բորսայում ակումբի բաժնետոմսերի գինն ընկավ գրեթե 2 տոկոսով, իսկ «Մանչեսթր յունայթեդի» կապիտալը նվազեց մինչեւ 273 մլն ֆունտ ստեռլինգ։ Ահա այսպես արձագանքեցին տեղի ունեցած միջադեպին ներդրողները, զգուշանալով, որ Բեքհեմը կարող է հեռանալ թիմից։ Ի դեպ, մամուլում արդեն հաղորդագրություններ հայտնվեցին, թե իբր «Արսենալը» պատրաստ է 50 մլն դոլարով գնել Բեքհեմին։ Սակայն թիմի գլխավոր մարզիչ Արսեն Վենգերը հերքել է այդ լուրը։

Դեւիդ Բեքհեմն այսօր «Մանչեսթր յունայթեդի» խորհրդանիշն է։ Մեծ է նրա դերը ակումբի խորհրդանիշով ապրանքների վաճառման գործում։ Աշխարհում ամենամեծ պահանջարկն ունեն 7 համարի մարզաշապիկները։ Հարցման արդյունքներով, միայն Ասիայում 16,6 մլն մարդ երկրպագում է «Մանչեսթր յունայթեդին», որովհետեւ այդ թիմում խաղում է Բեքհեմը։ Թաիլանդի վանքերից մեկում նույնիսկ տեղադրված է Բեքհեմի ոսկյա արձանիկը։

ՇԱԽՄԱՏ

Կասպարովն անհաջող մեկնարկեց

Իսպանական Լինարես քաղաքում մեկնարկել է շախմատի ավանդական սուպերմրցաշարը, որը ՖԻԴԵ-ի 20-րդ կարգին է դասվում։ Մրցավեճի են բռնվել աշխարհի ուժեղագույն գրոսմայստերներ Գարրի Կասպարովը (2847), դասական շախմատի աշխարհի չեմպիոն Վլադիմիր Կրամնիկը (2807), Վիշվանաթան Անանդը (2753), շախմատի աշխարհի միացյալ մրցամարտի կիսաեզրափակիչում Կրամնիկի մրցակից Պետեր Լեկոն (2736), ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի չեմպիոն Ռուսլան Պոնոմարյովը (2734), իսպանացի Ֆրանսիսկո Վալյեխոն (2629) եւ ադրբեջանցի պատանի շախմատիստ Թեյմուր Ռաջաբովը (2624), որն առաջին անգամ է մասնակցում Լինարեսի մրցաշարին։

Երկու շրջանով անցկացվող մրցաշարում հաջող մեկնարկեցին Անանդն ու Կրամնիկը, որոնք 2 տուրից հետո 1,5-ական միավորով գլխավորում են աղյուսակը։ Անանդն առաջին տուրում հաղթեց Պոնոմարյովին, իսկ հաջորդ պարտիան Վալյեխոյի հետ ավարտեց ոչ-ոքի։ Կրամնիկը մրցաշարը սկսեց Կասպարովի հետ ոչ-ոքիով, իսկ հաջորդ տուրում սեւերով պարտության մատնեց Պոնոմարյովին։

Մրցաշարն անհաջող սկսեց Կասպարովը, որը 2-րդ տուրում սպիտակներով սենսացիոն պարտություն կրեց Ռաջաբովից։ Վերջինս առաջին տուրում զիջել էր Լեկոյին։ Ռաջաբովն ու Լեկոն վաստակել են 1-ական միավոր (Լեկոն 1 խաղ է անցկացրել), Կասպարովն ու Վալյեխոն ունեն կեսական միավոր, իսկ Պոնոմարյովը 2 պարտություն է կրել։

Չեմպիոնը վայր դրեց լիազորությունները

Իտալիայում ընթացող ֆուտզալի Եվրոպայի առաջնությունում հայտնի դարձան եզրափակիչի մասնակիցները։ Չեմպիոնի կոչումը կվիճարկեն Իտալիայի եւ Ուկրաինայի հավաքականները։ Իտալացիները 2-1 հաշվով հաղթեցին աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն իսպանացիներին, ընդ որում, բոլոր գոլերը խփեցին իտալացիները։ Սկզբում երկու անգամ աչքի ընկավ Ֆոգլիան, հետո Մորատելին գնդակն ուղարկեց սեփական դարպասը։

Ուկրաինացիները ջախջախիչ պարտության մատնեցին չեխերին (5-1)։ Ընդ որում, ուկրաինացիները միայն 2-րդ խաղակեսում հասան առավելության։ Առաջին խաղակեսում գրանցվել է ոչ-ոքի (1-1)։

Նոկաուտ 49 վայրկյանում


AP-PHOTOLURE

Ծանրքաշային պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Մայք Թայսոնից ընդամենը 49 վրկ. պահանջվեց Մեմֆիսում կայացած մենամարտում Քլիֆորդ Էթյենին նոկաուտի ենթարկելու համար։ Այսպես անսպասելի շատ կարճ տեւեց Թայսոն-Էթյեն մենամարտը, որի շուրջ խոսակցությունները չէին դադարում արդեն մեկ ամիս։

Հիշեցնենք, որ մինչ մենամարտը, նախ Թայսոնը, ապա Էթյենը տարբեր պատճառաբանություններով հրաժարվել էին հանդիպումից։ Սակայն մենամարտը կայացավ եւ ավարտվեց Թայսոնի հաղթանակով, որը 50-րդն էր նրա կենսագրությունում, որոնցից 43-ում նա մրցակցին նոկաուտի է ենթարկել։ Այս հանդիպման համար Թայսոնը 5 մլն դոլար ստացավ՝ իրավունք ստանալով նաեւ ամռանը աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկել Լենոքս Լյուիսի հետ։ 36-ամյա Թայսոնը հայտարարել է, որ ուրախ է ռինգ վերադառնալու համար եւ իրեն այժմ ավելի վստահ է զգում, քան 1 տարի առաջ։

Բորզակովսկին գերազանցեց Կիպկետերին

Ստոկհոլմում անցկացված թեթեւ ատլետիկայի միջազգային մրցումներում 21-ամյա Յուրի Բորզակովսկին 800 մ վազքում մարզադահլիճներում Ռուսաստանի նոր ռեկորդ սահմանեց (1 րոպե 44,34 վրկ)։ Նա 0,34 վրկ-ով գերազանցեց իր գլխավոր հակառակորդ Վիլսոն Կիպկետերին՝ ցույց տալով ընթացիկ մրցաշրջանի լավագույն արդյունքը։

Ձողացատկի մրցումներում 466 սմ արդյունքով հաղթեց ռուսաստանցի Տատյանա Պոլնովան։ 23-ամյա կրասնոդարցի մարզուհին 3 անգամ գրոհեց Սվետլանա Ֆեոֆանովայի ռեկորդային բարձունքը (477 սմ), սակայն անարդյունք։ Բարձրացատկի մրցումներում Եվրոպայի չեմպիոնուհի շվեդ Կայսա Բերգկվիստը Սկանդինավիայի ռեկորդ սահմանեց (203 սմ)։ Աշխարհի ռեկորդակրուհի (204 սմ) Աննա Չիչերովան 201 սմ արդյունքով 2-րդն էր։ 3-րդ տեղը գրավեց անցյալ տարվա Եվրոպայի չեմպիոնուհի ռուսաստանցի Մարինա Կուպցովան (199 սմ)։

Սարգսյանն ու Մովսիսյանը կփորձարկվեն «Սերվետում»

Ֆուտբոլի ՀՀ հավաքականի ֆուտբոլիստներ Ալբերտ Սարգսյանն ու Անդրեյ Մովսիսյանը մոտ ժամանակներս կուղեւորվեն Շվեյցարիա, որտեղ փորձաշրջան կանցնեն Ժնեւի «Սերվետում»։ Երկու ֆուտբոլիստներն էլ ակումբների կողմից տրանսֆերի են հանվել եւ ներկայումս մարզվում են Մոսկվայի «Տորպեդոյի» եւ Ռամենսկոյի «Սատուրնի» փոխարինող կազմում։

Նշենք, որ Ալբերտ Սարգսյանը 2-րդ անգամ կուղեւորվի Շվեյցարիա՝ փորձաշրջանի։ Ժամանակին նրանով հետաքրքրվում էր «Յանգ բոյզը», որում խաղում են Հարություն Վարդանյանն ու Արթուր Պետրոսյանը, սակայն ակումբների ղեկավարները համաձայնության չէին եկել։

Էջը պատրաստեց ԱԿՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՇՐՋԱՊԱՏ

Գիտե՞ք ով է Արամ Կարապետյանը

Շամիլ Բասաեւ, Խաթաբ: Նկարում պատկերված չեչեններն, անշուշտ, ծանոթ են ընթերցողին, սակայն նրանց կողքին կանգնած Հեյդար Ջեմալը՝ ոչ այնքան: Ջեմալը ռուսաստանաբնակ ադրբեջանցի է, մահմեդական աշխարհում բավականին ճանաչված, ազդեցիկ մի մարդ, մի խոսքով՝ ստվերային լիդեր:

«Վրեժխնդրությունն օրինական գործողություն է, միակը, որ երաշխավորում է կյանքի, ունեցվածքի եւ արժանապատվության պահպանումը», սա Ջեմալի ունեցած ելույթից մի հատված է, որը մոտավոր, բայց նրա մասին որոշակի պատկերացում է տալիս: Պարզ է դառնում նաեւ Հայաստանի նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքը: Նույն Ջեմալը Մոսկվայի «Շեշ-բեշ» ադրբեջանական ռեստորանի մշտական այցելուն է, որը ադրբեջանական զինվորական հետախուզության ղեկավարին է պատկանում:

Հենց այս մարդու կողմից հովանավորվելու մեջ էր, որ վերջերս ՀՀ նախագահի թեկնածու Արամ Կարապետյանին մեղադրեց «Երեխաների իրավունքների պաշտպանություն» բարեգործական հասարակական կազմակերպության ղեկավար Ալեքսանդր Գեւոեւը: Մեղադրանքներին ի պատասխան Արամ Կարապետյանը, որդեգրած գործելակերպին հավատարիմ, գերադասեց ոչ թե հակափաստարկ ներկայացնել, այլ հայհոյել: Իսկ Գեւոեւը պատրաստ է ապացուցել ասածը: Նրա խոսքով, մահմեդականների կողմից Հայաստանում քաղաքական պատերազմ սկսելու նպատակներն ավելի վաղ են հայտնի, հայտնի էր նաեւ ճանապարհը՝ ծախված նախագահ: Ալեքսանդր Գեւոեւի կասկածները, որ դա Արամ Կարապետյանն է, ապացուցվել են նախագահի թեկնածուի հետ մի քանի հանդիպումից հետո ընդամենը, երբ Մոսկվայի «Ռոբերտո» ռեստորանում նրա հետ ունեցած հերթական հանդիպումից մի փոքր անց Արամ Կարապետյանին տեսել է նույն ռեստորանում, սակայն արդեն Ջեմալի հետ:

Աջից Ջեմալը, Խաթաբը, Բասաեւը:

Կասկածները փարատելու կամ դրանց ապացույցը գտնելու համար Գեւոեւն այնուհետեւ Ջեմալին է զանգահարում, առաջարկում հանդիպել, Հայաստանի «ապագա նախագահի» գործերը քննարկել: Ինչպես Գեւոեւն է պատմում, առաջարկը սկզբում ընդունվում է, այնուհետեւ կասկածի տակ դրվում եւ

մերժվում, հավանաբար հասկանալով, որ Գեւոեւի կողմից Արամ Կարապետյանին օգնության պատրաստակամությունն իրականում այլ նպատակ ուներ:

Հետաքրքրական է, ասում է Գեւոեւը, երբ իմ ֆինանսական օժանդակությունն էր ակնկալում, Ա. Կարապետյանն ինձ հայ էր համարում, իսկ այժմ հեռուստաեթերից եւ մամուլի էջերից ինձ ասորի է անվանում, ինչը, համենայնդեպս, ամենեւին վիրավորանք չէ: Մեղադրանքների դիմաց բերվող հակափաստարկներն Ալեքսանդր Գեւոեւի համար ծիծաղելի են թվում, սակայն առաջիկայում նա պատրաստվում է ասածի համար նոր ապացույցներ բերել:

Իսկ առայժմ Գեւոեւը Արամ Կարապետյանի՝ մեր քաղաքական դաշտում լինելը վտանգավոր է համարում, առավել եւս երբ նա Ստեփան Դեմիրճյանի ձեռքը բռնած Ռոբերտ Քոչարյանի հրաժարականն է պահանջում: Ռուսաստանում էլ այս օրերին ադրբեջանական սփյուռքն է Հայաստանի դեսպանության դիմաց Ռոբերտ Քոչարյանի հրաժարականը պահանջում: Հետաքրքրական զուգադիպություն է, որը պետք է որ մտածելու տեղիք տա:

ԱՆԱՀԻՏ ՍԱՂՐՅԱՆ

Ադրբեջանցիները ցույց էին արել

Մոսկվաբնակ մի խումբ ադրբեջանցիներ, ինչպես հայտարարել էին օրեր առաջ, փետրվարի 22-ին հավաքվել էին ՌԴ-ում Հայաստանի դեսպանության շենքի առջեւ բողոքի ցույցի: Նրանք նշում էին Խոջալուի դեպքերի հերթական տարելիցը: 1992 թ. ձմռանը կատարված դեպքերը եւ Խոջալու ավանի բնակիչներից շատերի զոհվելը Ադրբեջանի պաշտոնական քարոզչությունը շարունակում է ներկայացնել իբրեւ հայկական զորքերի կատարած «ցեղասպանություն», առանց հաշվի առնելու, որ այդ իրադարձությունների մասին, ի վերջո, կան նաեւ օբյեկտիվ փաստագրական նյութեր: Այդ թվում՝ ադրբեջանական աղբյուրներից ստացվող: Այն ժամանակվա երկրի նախագահ Մութալիբովը, որին շարունակում է հետապնդել ադրբեջանական իշխանությունը, բազմիցս հայտարարել է, որ Խոջալուն շատ հմուտ կերպով կազմակերպել էին իր հակառակորդները, եւ հայկական զորքի թողած մարդասիրական միջանցքով դուրս եկող խաղաղ բնակիչներին գնդակահարել են հենց ադրբեջանական ստորաբաժանումները: Այսքանից հետո, միեւնույն է, ադրբեջանական քարոզչամեքենան շարունակում է պնդել իր վարկածը:

Մոսկվայում կազմակերպված պիկետի մասնակիցները ռուսերեն լեզվով պաստառներ էին բերել, որոնց վրա, բնականաբար, հայկական զորքերի «վայրագությունները» դատապարտող գրություններ էին: Օրինակ, «Վերջ տվեք Ադրբեջանի տարածքի օկուպացիային», «Պահանջում ենք կիրառել ՄԱԿ-ի ԱԽ բանաձեւերը»: Կարելի կլիներ շարունակել, սակայն բերված կարգախոսների քանակը հենց այսքանն էր: Գումարված մոտ 15-20 մարդ, երկու տեսախցիկ:

Նկատենք, որ Խոջալուի օրը ադրբեջանցիները նշում են ամեն տարի, սակայն այս տարի որոշվել է դրան մեծ միջազգային հնչեղություն տալ: Նման միջոցառումներ են կազմակերպվել նաեւ աշխարհի մի շարք այլ խոշոր քաղաքներում: Թե ի՞նչ ընթացք են ունեցել այլ տեղերում կազմակերպված նման միջոցառումները, կարելի է միայն ենթադրել: Ակնհայտորեն, ոչ կլոր այս տարելիցը զուտ քարոզչական նպատակ է հետապնդում. հոկտեմբերին Ադրբեջանում տեղի են ունենալու նախագահական ընտրություններ, եւ Հեյդար Ալիեւին չափազանց անհրաժեշտ է նման կարգի միջոցառումների շնորհիվ երկրի ներսում իր վարկանիշը բարձրացնել եւ վերընտրվել:

Շուրջ մեկ ժամ տեւած պիկետի ընթացքում որեւէ լուրջ միջադեպ չգրանցվեց: Ադրբեջանցիները հավաքեցին ցուցապաստառներն ու իրենց բողոքի դիմումը հանձնելով դեսպանության աշխատակիցներին՝ հեռացան:

ՌՈՒԲԵՆ ՍԱՄՍՈՆՅԱՆ
Մոսկվա

Երկրաշարժ Չինաստանում

Ինչպես տեղեկացրին «Հայկական սեյսմոլոգիական եւ երկրի ֆիզիկայի ընկերակցության» (ՀՍԵՖԸ) լրատվական ծառայությունից, փետրվարի 24-ի առավոտյան, Չինաստանի սեյսմոլոգիական ծառայության համաձայն, տեղական ժամանակով 10.30-ին տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ: Էպիկենտրոնը գտնվում է Չինաստանի Սինդիանգ մարզում: Ցնցումների ուժգնությունը կազմել է 6,8 մագնիտուդա: Օպերատիվ տվյալների համաձայն, էպիկենտրոնին մոտ գյուղական վայրերում փլվել է ավելի քան 1000 շինություն, պաշտոնական տվյալների համաձայն, ավելի քան 242 մարդ զոհվել է, 1000-ը՝ վիրավորվել: Բանակի ստորաբաժանումները եւ փրկարարները շարունակում են մարդկանց որոնման եւ փրկարարական աշխատանքները: Այդ ուժգնությամբ երկրաշարժը Խինջյանգ շրջանում կանխատեսվում էր Չինաստանի սեյսմոլոգների կողմից երկարաժամկետ սեյսմիկ վտանգի քարտեզի վրա:

ՄԱՐԻՆԵՍԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՓԱՍՏԵՐ

«Մի՛ մոռացեք, որ Հայաստանն էլ տարածքային ամբողջականության խնդիր ունի»

Նման հայտարարություն Ռոբերտ Քոչարյանը չի արել, չի արել՝ գոնե հրապարակավ

«Ընդամենն ուզում ենք հիշեցնել, որ Քի Վեսթից վերադառնալով՝ հայաստանյան պատվիրակության ղեկավարը «Զվարթնոց» օդանավակայանում բազմիմաստ հայտարարություն արեց. «Մի՛ մոռացեք, որ Հայաստանն էլ տարածքային ամբողջականության խնդիր ունի», փետրվարի 19-ի համարում գրում է «Հայկական ժամանակ» օրաթերթը «Տարածքների փոխանակման վերադարձը-2, կամ ի՞նչ են ասել Ժակ Շիրակն ու Վլադիմիր Պուտինը» հոդվածում:

Հրապարակման հեղինակ Ա. Կարապետյանի արտահայտած տեսակետներին համաձայն լինել-չլինելու մասին չէ մեր այս անդրադարձը: Պարզապես նշենք, որ հարգարժան հոդվածագիրը գործող նախագահ Ռ. Քոչարյանին վերագրում է հայտարարություն, ընդ որում՝ սուտ հայտարարություն, եւ այդ մեկ նախադասության վրա կառուցում իր վերլուծությունը: Հայաստանի նախագահը, կրկնենք, Քի Վեսթից վերադառնալով «Զվարթնոց» օդանավակայանում չի հայտարարել, թե իբր՝ «Մի՛ մոռացեք, որ Հայաստանն էլ տարածքային ամբողջականության խնդիր ունի»:

Տողերիս հեղինակը 2001 թ. ապրիլի 11-ին լրագրողների խմբի հետ եղել է «Զվարթնոց» օդանավակայանում, այս պահին մեր ձեռքի տակ է Քոչարյանի հարցազրույցի սղագրությունը: Որպես ղարաբաղյան հակամարտության կարգավորման տարբերակ տարածքների փոխանակման հավանականության մասին նախագահին ընդամենը մեկ հարց ուղղվեց՝ հաղորդակցությունների բացման, տարածքների փոխանակման մասին խոսակցություններ Քի Վեսթում եղե՞լ են, որին Քոչարյանը պատասխանեց մեկ նախադասությամբ. «Դետալների մասին չեմ կարող խոսել»:

Անշուշտ, մենք չենք կարող տեսակորեն բացառել, որ ղարաբաղյան բանակցությունների ինչ-որ փուլում քննարկված լինի տարածքներ փոխանակելու ամերիկյան առաջարկը, ինչի մասին «Ազգը» տասնյակ հրապարակումներ է տպագրել: Պարզապես հիշեցնենք, որ տարածքների փոխանակման մասին խոսակցությունները սկիզբ են առնում տակավին 1989 թվականից եւ հիմնականում այդ խոսակցությունները ծառայեցվում են քաղաքական ինչ-ինչ նպատակների:

Ի դեպ, 2001 թ. ապրիլի 14-ին Քի Վեսթից Լոնդոնով Բաքու վերադարձավ Հեյդար Ալիեւը, որին «Բինա» օդանավակայանում տարածքների փոխանակման հավանականության մասին մեկ հարց ուղղվեց: Մեր ձեռքի տակ է Ադրբեջանի նախագահի այդ օրը օդանավակայանում լրագրողներին տված հարցազրույցի սղագրության տեքստը: Լրագրողի հարցին, թե հայկական մամուլում շրջանառվում են տարածքների փոխանակման մասին ենթադրություններ, Հեյդար Ալիեւը պատասխանում է. «Գիտեք, ինչպես Ադրբեջանում, Հայաստանում էլ կան մարդիկ, ովքեր լրատվամիջոցներում արտահայտում են իրենց կարծիքը կամ բաներ հորինում: Ուրեմն ե՞ս պետք է պատասխանեմ բոլոր հորինվածքներին: Ես գիտեմ՝ ինչն է ճիշտ եւ ինչը՝ սխալ»:

Հետագա հարցազրույցներում, հրապարակային ելույթներում Հեյդար Ալիեւը մի քանի անգամ հաստատել, ապա կտրականապես հերքել է ղարաբաղյան կարգավորման Մեղրին Լաչինով փոխանակելու հնարավոր տարբերակը: Պետք է ենթադրել, որ Ադրբեջանում նույնպես, ինչպես Հայաստանում, ղարաբաղյան հարցը երբեմն շահարկվում է զուտ քաղաքական նպատակներով:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ հայկական մասնաճյուղ (ԲՀԻՕՀՀՄ)

Կենտրոնական եվրոպական համալսարանի ուսումնական ծրագրերի մշակման կենտրոնը Բաց հասարակության ինստիտուտի «Աջակցություն բարձրագույն կրթությանը» ծրագրի օժանդակությամբ հայտարարում է դրամաշնորհի մրցույթ՝ համալսարանական ուսումնական դասընթացների մշակման եւ դասավանդման համար: Ծրագրի նպատակն է աջակցել նորարարական ծրագրերի ներմուծմանն ու տարածմանը Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում, նախկին Խորհրդային Միությունում եւ Մոնղոլիայում, ինչպես նաեւ աջակցել սույն տարածաշրջանի գիտնականների միջկառավարական եւ միջազգային համագործակցությանը:

Մրցույթը կընդգրկի հետեւյալ բնագավառները. որակական հետազոտության մեթոդներ, մարդաբանություն/մշակութային ուսումնասիրություններ/պատմություն, սոցիալական տնտեսագիտություն, փիլիսոփայություն/կրոնական ուսումնասիրություններ եւ լեզվաբանություն: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել անհատական կամ խմբային հայտ: Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2003 թ. ապրիլի 15-ը: Հայտի հատուկ ձեւը, ինչպես նաեւ հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակում հետեւյալ հասցեով՝

Երեւան 10, Պուշկինի 1, բն. 2,
հեռ.՝ 542-119, 541-719, 543-901, e-mail: armenuhi@osi.am,
ինչպես նաեւ ինտերնետում www.ceu.hu/crc/cdc

XX ԴԱՐԻ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ ԿԱՆԱՅՔ. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնը հայտարարում է «XX դարի հայ կին գիտնականների կենսագրական հանրագիտարանի» վեբ էջի ստեղծման մասին (http://www.iatp.irex.am/grants/bioencyclopedia): Հանրագիտարանը կընդգրկի Հայաստանի եւ սփյուռքի (անցյալի եւ ներկայիս) բոլոր կին գիտնականների համառոտ կենսագրությունները եւ տեղեկություններ գիտական աշխատանքի մասին:

Կենսագրական հանրագիտարանը ստացել է նախնական ֆինանսական օգնություն UNDP-ի եւ IREX IATP:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝
ՔՀԶԿ, 375001 Երեւան, Աբովյան փ. 15, • 37
Հեռ.՝ (374 1) 561320
Fax: (374 1) 585 677
E-mail: cdcs@arminco.com ծրագրի համակարգող Ժակլինա Ահարոնյանին

☎ 529353 ԱՆՎՃԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վաճառվում է Рубин հեռուստացույց 51 սմ տրամագծով, էկրանը TOSHIBA մակնիշի, տեխ. մասերը՝ արտասահմանյան: Գինը՝ 65 դոլար: GOLDSTAR տեսամագնիտոֆոն, օգտագործված: Գինը՝ 75 դոլար: Հեռ.՝ (09)423833
- Վաճառվում է մեքենայի հեղուկ գազի սարքավորում իր բոլոր պարագաներով: Գինը՝ 80 դոլար: Հեռ.՝ 531439 (Արմեն):
- Տրվում է վարձով 2 սեն. բն. կենտրոնում (5/2) բոլոր հարմարություններով: Գինը՝ 200 դոլար: Հեռ.՝ 538341:
- Կազմակերպում ենք մանկական տոներ, ծննդյան տոներ եւ այլ միջոցառումներ: Հեռ.՝ 231170, Գրիգոր:
- Վաճառվում են շահումային երկու խոշոր բարձր որակի ապարատներ, աշխատում է գազով, պատրաստված են ռուսական քիթից: Վաճառվում է նաեւ Չորչը բարձր սեղան: Հեռ.՝ 24-73-42:
- Կգնեմ նոր մոդելի բջջային հեռախոսներ: Հեռ.՝ 09 46 93 72, Հովիկ:
- Ընդունվում են լամինացված կահույքի պատվերներ, հեռուստացույցի տակդիրներ, համակարգչի սեղաններ, ներկառուցված պահարաններ, խոհանոցի կահույք եւ այլն: Հեռ.՝ 77-18-16, Վարուժան:
- Ընդունվում են հալի ֆուքսայի պատվերներ ընկույզով, 1 հատը՝ 150 դրամ, քաշը՝ 100 գ., առանց ընկույզի՝ 120 դր: Հեռ.՝ 735086:
- Վաճառվում է SAMSUNG հեռուստացույց 54 սմ հարթ էկրանով, նոր: Գինը՝ 230 դոլար: Հեռ.՝ 281350:
- Վաճառվում են մեքենայի դինամիկներ SONY XS-GT 6934, 230 WATT: Գինը՝ 53 դոլար: Հեռ.՝ (09)423833:
- Վաճառվում է 1994 թ. արտադրության «Գազ 31029» մակնիշի ավտոմեքենա, մոխրագույն, բնական գազով: Հեռ.՝ 553232 (տուն):
- Վաճառվում է 1991 թ. արտադրության «Վազ 2106» մակնիշի սպիտակ գույնի մեքենա, վազքը՝ 130 հազար կմ: Գինը՝ 1600 դոլար: Հեռ.՝ 29-92-27, Մոն:
- Վաճառվում է 2 սեն. բնակարան Տերյան 65 հասցեում, 5/2 հարկ, ունի փակ պատշգամբ, վերանորոգված չէ: Գինը՝ 60.000 դոլար: Հեռ.՝ 52-42-73 (17:00-ից հետո):

«Գինգ» տպագրատուն, Երեւան, Բաղրամյանց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 24. 2. 2003 Գինը՝ 100 դրամ